

ՖՐԻՏԱԸՆ, ՆԱԾԱՐԵԱՆ ԵՒ ՔԻՆԹԵՐՕ ՅԱՂԹԱԿԱՆ ԿԼԵՆՏԵԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Երեքշաբթի, Ապրիլ 7-ին տեղի ունեցած Կլենտել քաղաքի քաղաքապետական ընտրություններուն յաղթական դուրս եկան Լորա Ֆրիտմանը, Արա Նաճարեան եւ Ֆրանք Քինթերո, որոնք եկան գրավելու քաղաքապետական խորհուրդի երեք թափուր տեղերը:

Ընտրություններուն մասնակցեցան քաղաքի շուրջ 20 հազար բնակիչներ: Նոր թեկնածու Լորա Ֆրիտմանը 8497 ձայնով գրավեց առաջին տեղը, դառնալու համար քաղաքապետական խորհուրդի միակ կին անդամը: Արա Նաճարեան 8466 ձայնով եւ Ֆրանք Քինթերո 8120 ձայնով վերընտրուեցան 4 տարուայ շրջանի մը համար:

Քաղաքապետական խորհուրդի ներկայիս անդամ Պոպ Եուսէֆեան 6654 ձայնով գրավեց չորրորդ տեղը ու ալրպիսով կորսնցուց իր աթոռը:

Միւս Հայ թեկնածուները ստացան հետեւեալ ձայները՝

Շահէ Քորոզլեան	5889
Վարդան Կարապետեան	3067
Արամ Գազազեան	2441
Էտուարտ Լաֆեան	677
Արամազդ Ստեփանեան	493

Նոյն օրը տեղի ունեցան նաեւ քաղաքի ուսումնական խորհուրդի ընտրությունները: Կրէկ Գրիգորեան առանաբար ամենաբարձր թիւով ձայներ, վերընտրուեցաւ նոր շրջանի մը համար:

ՆԱԽԱԳԱՅ ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ՝ «ԵՍ ՉԵՄ ՓՈՒՍԱԾ ԻՄ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ» «ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԵՐԿԻՐ ՊԱՐՏԱԻՈՐ Է ԸՆԴՈՒՆԻԼ ԱՆՑԵԱԸ»

Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամա Երկուշաբթի, Ապրիլ 6-ին Անգարայի մէջ տեղի ունեցած մամլոյ ասուլիսի մը ընթացքին, Հայոց Յեղասպանության վերաբերեալ հարցումի մը պատասխանելով ըսաւ, - «Իմ յայտնած տեսակէտներն արձանագրուած են, եւ զանոնք չեմ փոխած»:

Ասուլիսի ընթացքին Օպամայի կողքին կանգնած էր Թուրքիոյ նախագահ Ապտուլա Կիլ Երբ Chicago Tribune թերթի թղթակիցը ուղղեց հետեւեալ հարցումը. - «Որպէս ծերակուտական դուք եղած էք ամերիկահայերու կողքին, կողմ եղած էք Հայոց Յեղասպանությունը ճանչցող բանաձեւի ընդունման, կ'ըսէիք, որ որպէս նախագահ պիտի ճանչնաք ցեղասպանությունը: Արդեօք փոխա՞ծ էք ձեր տեսակէտը»:

Միացեալ Նահանգներու նախագահի պատասխանը եղաւ հետեւեալը. - «Ես իմ տեսակէտները չեմ փոխած: Ինծի համար ոգէշնչող են այն լուրերը, որ Ապտուլա Կիլի պաշտօնավարման օրով բանակցային գործընթաց սկսած է Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ, որու նպատակն է շարք մը կուտակուած հարցերու լուծումը գտնելը, որոնց շարքին՝ այս հարցի լուծումը: Ես կ'ուզէի կարելիութեանս չափով աջակցել այս բա-



Նախագահ Պարաք Օպամա ելոյթ կ'ունենայ Թուրքիոյ խորհրդարանի միստին

նակցություններուն, որոնք տակաւին կը շարունակուին եւ կրնան շատ շուտով արդիւնքի հանգիլ: Այս պայմաններուն մէջ ես կ'ուզէի կեղծոնանալ ոչ թէ իմ, այլ Թուրք եւ հայ ժողովուրդներու տեսակէտներու վրայ: Եթէ անոնք կրնան առաջ շարժիլ՝ լուծելով իրենց ողբերգական ու դժուարին պատմության խնդիրները, այս պայմաններուն մէջ ողջ աշխարհը անոնց պէտք է աջակցի: Ես նախագահին ըսի, որ կը ցանկանամ որքան կարելի

է կառուցողական դիրք բռնել, որպէսզի այս հարցերը արագորէն լուծուին: Իմ զգացողութիւնը այնպիսին է, որ այդ գործընթացները արագորէն կը զարգանան: Ես կ'ուզէի նաեւ ըսել, որ այս բոլոր խնդիրներու լուծման ընթացքին մենք պէտք է համագործակցինք, որպէսզի ամենակարեւոր կողմերը՝ Թուրքերն ու հայերը կարողանան կառուցողական ձեւով յանգիլ ընդ-

Շաբ.ը էջ 4

ՍԴՅԿ-Ի ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

Հայ-թուրքական յարաբերութիւնները արդի փուլում իրենցից ներկայացնում են խոշոր, պատմականօրէն ձեւաւորուած հիմնա-խնդիրների մի քարոյ հանգոյց, որի լուծումը պահանջում է մեծ գգոյ շաւտրութիւն եւ քաջառում է որեւէ շտապողականութիւն:

Բանական կը լինէր առաջին հերթին, համադրելով Հայաստանի Հանրապետութեան ու Սփիւռքի կենսական շահերը, դասակարգել վերոյիշեալ հիմնախնդիրները ըստ կարեւորութեան, մշակել լուծելի առաջնահերթ խնդիրների ընթացակարգը, հիմնաւորել հնարաւոր լուծումների շահեկանութիւնը հայկական կողմի համար, այնուհետեւ անպայման կազմակերպել այն հասարակական-հաղափական մեղաբարձուներ Սփիւռքի մասնակցութեամբ, եւ, կոնսենսուսի քաջակայութեան պարագայում, գալ ընդհանուր յայտարարի՝ համազգային հանրաժողովի միջոցով:

Սակայն, ազգային-պետական շահերին հակառակ, Հայաստանի Հանրապետութիւնում իշխանութիւնը անօրէն գաւթած աւազակապետական ուժերի մը շահագրգիռ փտանգաւոր արտաքին հաղափական մի արկածախնդրութեան, յուսալով ստանալ աշխարհա-հաղափական որոշ խաղացողների քարեացակամ վերաբերմունքի եւ դրանով իսկ երկարաձգել սեփական գոյութիւնը, ինչի գիմն է Արցախի կորուստը եւ ՀՀ ազգային

Շաբ.ը էջ 4

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՀԱՅ-ԹՈՒՐԲ ՓՈՒՍՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Տօթ. Համրիկ Սարաֆեան, Զաւէն Խաննեան եւ Յարութ Սասունեան

Ապրիլ ամիս է կրկին: Նշելու համար Հայոց Յեղասպանության 94-ամեակը, Ս.Գ.Հ.Կ.Ի Կլենտէյլի «Արսէն Կիտուր» մասնաճիւղը՝ գովելի գաղափարը ունեցած էր կազմակերպելու հրապարակային քննարկում մը, բաւականին այժմէական նիւթի մը շուրջ, որ լուրջ առնչում մը ունի հայ ժողովրդին հետ, միեւնոյն ատեն խնդրոյ առար-

կայ դարձնելով հայ-թուրք փոխ-յարաբերությունները:

Չեւնարկը տեղի ունեցաւ Ուրբաթ 3 Ապրիլ, երեկոյեան ժամը 8:00ին, ի ներկայութեան Հ.Հ. Գլխաւոր հիւպատոս, պրն. Գրիգոր Յովհաննէսեանին, հիւպատոսարանի անձնակազմէն՝ տիար Մեսրոպ

Շաբ.ը էջ 18

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐՈՒ ՌԵՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Բոլոր այն Լիբանանահայերը, որոնք մախապէս արձանագրուած էին մեր գրասենեակի մօտ՝ մասնակցելու համար Յունիս 7-ի Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններուն, կը խնդրուի իրենցմէ դարձեալ կապուիլ մեզի հետ, հեռաձայնելով 310-466-7779 թիւին, ստանալու համար յաւելեալ տեղեկութիւններ:

ՍԴՅԿ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ

ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԼՂ-Ի ՇՐՋԱԿԱՅ ԸՈՂԵՐԸ ԿԸ ՅԱՆՁՆԵՄ

Հայ-թուրքական սահմանի հնարաւոր բացման եւ Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացի շուրջ անհախադէպ ակտիւութիւն է սկսուել, ընդ որում՝ իրադարձութիւնները գարգանում են ժամ առ ժամ:

Յայտնի դարձաւ, որ հայ-թուրքական սահմանի հնարաւոր բացման պատճառով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը կարող է նմանակցել Ստամբուլում Ապրիլի 6-7-ը կայանալիք «Քաղաքակրթութիւնների դաշինք» ֆորումին: Այս մասին երէկ հաղորդագրութիւն է տարածել Ադրբեջանի նախագահի աշխատակազմը: Չնայած որպէս դրա պատճառ նշուած է Ալիևի գբադուածութիւնը, այդուհանդերձ դժուար է կուհանել, որ այդ կերպ պաշտօնական Պաքուն իր դժգոհութիւնն է յայտնում Հայաստանի եւ Թուրքիայի սահմանի հնարաւոր բացման կապակցութեամբ: Այդ են վկայում նաեւ ադրբեջանական ԶՄ-ներում այս երկրի իշխանութիւնների կողմից Թուրքիայի ղեկավարութեան հասցէին հնչող անհախադէպ քննադատութիւններն ու մեղադրանքները:

Օրինակ՝ Ալիևի՝ Ստամբուլ մեկնելուց հրաժարուելուց բացի, հայ-թուրքական սահմանի հնարաւոր բացման կապակցութեամբ իրենց դժգոհութիւնն են արտայայտել Ադրբեջանի մեջլիսն ու ԱԳՆ-ն: ԱԳՆ տարածած հերթական յայտարարութեան մէջ նշուած է. «Ղարաբաղեան հակամարտութեան կոնսուլտացիոն գումար հայ-թուրքական սահմանի բացումը հակասում է Ադրբեջանի ազգային շահերին: Ադրբեջանական տարածքների օկուպացիան պայմաններում հայ-թուրքական սահմանի բացումը կարող է կործանարար ազդեցութիւն թողնել ԼՂ շուրջ բանակցութիւնների վրայ, քանզի այդ քայլը հայկական կողմից կ'ընկալուի որպէս ադրբեջանական տարածքների օկուպացիան խրախուսող քայլ»: Այսինքն՝ Պաքուն

Անկարայից պահանջում է, որ սահմանը բացելու դիմաց Թուրքիան գոնէ որպէս նախապայման առաջ քաշի ԼՂ հարցի կարգաւորումը:

Ատրպէյճանի ճշուումն այնքան մեծ է, որ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ էրդողանը երէկ ստիպուած է եղել «CNN-Turk-ի միջոցով յայտարարել, թէ «մինչեւ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորումը հայ-թուրքական սահմանը չի բացուելու»: «Մինչեւ դարաբաղեան հիմնախնդրի կարգաւորումը մենք չենք կարող Հայաստանի հետ յարաբերութիւնների վերաբերեալ արդիւնաւէտ որոշում ընդունել», - նշել է էրդողանը:

Այնուամենայնիւ, չնայած սրան, Թուրքիայում չեն համարում, որ մինչեւ ԼՂ հարցի կարգաւորումը սահմանի բացում չի լինի: Թուրքական մամուլում շրջանառուող լուրերի համաձայն, ապրիլի 5-ին ԱՄՆ նախագահ Պարաք Օպայի՝ Թուրքիա կատարելիք այցի ընթացքում քննարկուելու է դարաբաղեան հակամարտութեան շուրջ բանակցային գործընթացում Անկարայի ներգրաւման հարցը: Որոշ տեղեկութիւնների համաձայն, չի բացատրուած, որ Օբաման ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ միւս երկու երկրներին առաջարկի Թուրքիային եւս համանախագահող երկրի կարգավիճակ տալ, կամ Թուրքիայի ներգրաւման թիւնը բանակցային գործընթացին կարող է արտադաստուել այլ կերպ:

Դա կը լինի խորհրդանշական երաշխիք, որ Թուրքիան հայ-թուրքական յարաբերութիւններում ելակէտ է ընդունելու ԼՂ հիմնախնդիրը: Հենց սրա վրայ էլ այժմ պնդում է պաշտօնական Պաքուն: Թուրքիայի ներգրաւմանը հանգստացնող ազդեցութիւն կ'ունենայ պաշտօնական Պաքունի համար, իսկ Անկարայի հնարաւորութիւն կը տայ «փոքր եղբոր» աչքում փրկել իր դէմքը եւ հաւաստիացնել, որ սահմանի բացումով լրացուցիչ չ'ըստ

ձեռք կը բերուի ԼՂ հարցում ՀՀ-ի վրայ ճնշում գործադրելու համար: Այս կապակցութեամբ տեղին կը լինի յիշել Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիլի՝ անցեալ Սեպտեմբերի 6-ին Երեւան կատարած այցից մի քանի օր անց Պաքուն արած այն ակնարկը, թէ՛ «միթէ՞ չարժէ բարելաւել հայ-թուրքական յարաբերութիւնները, եթէ այն նպաստելու է ԼՂ հիմնախնդրի ադրբեջանական կարգաւորմանը»:

Այն, որ Թուրքիային նոր դեր է տրուելու ԼՂ կարգաւորման գործընթացում, ակնյայտ է նաեւ Մեթիւ Բրայզայի՝ երէկ Պաքուն Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ հանդիպումից յետոյ ադրբեջանական ԶՄ-ների ներկայացուցիչների համար արած յայտարարութիւններից: «Մենք հաւատում ենք, որ Թուրքիան դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործում օգնականի դեր կարող է խաղալ, քանզի, ինչպէս արդէն յայտնի է, Թուրքիան դրական դեր է խաղում տարածաշրջանում», - ըստ «ԱՊԱ»-ի, յայտարարել է Բրայզան: Վերջինիս յայտարարութիւնից նաեւ երեւում է, որ նա հակուած է հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը դիտարկել դարաբաղեան հակամարտութեան հետ փոխկապակցուած: «Տարածաշրջանում տեղի ունեցող դրական տեղաշարժերը պէտք է տեղի ունենան զուգահեռաբար, այսինքն՝ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացում արդիւնքների ձեռքբերումը եւ հայ-թուրքական յարաբերութիւնների ջերմացումը պէտք է փոխկապակցուած լինեն եւ պէտք է խթան հանդիսանան մէկը միւսի համար», - ընդգծել է Բրայզան: Ինչ վերաբերում է ԼՂ հիմնախնդրի կարգաւորման բանակցային գործընթացին, նա շեշտել է, որ այն ընթանում է «Մազրիդեան սկզբունքների» հիման վրայ, այն է՝ ուժի չ'կիրա-

ւում, տարածքային ամբողջականութեան եւ ազգերի ինքնորոշման սկզբունքի ապահովում: Ըստ նրա, նախեւառաջ հայկական կողմը պէտք է գործերը դուրս բերի ԼՂ-ին յարակից շրջաններից, պէտք է վերադառնան ադրբեջանցի փախստականները, ապա բուն ԼՂ տարածքում, հայկական եւ ադրբեջանական համայնքների մասնակցութեամբ, կարգավիճակի շուրջ հանրաքուէ կ'անցկացուի:

Նա նաեւ տեղեկացրել է, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների հերթական հանդիպումը տեղի է ունենալու Մայիսի 7-ին կամ 8-ին Պրահայում: Բրայզայի տեղեկացմամբ, մինչ նախագահների հանդիպումը՝ Ապրիլ ամսուայ ընթացքում, համանախագահները կրկին կ'այցելեն տարածաշրջան: Այս կապակցութեամբ նա նշել է, որ յոյս ունի, թէ հերթական հանդիպման ժամանակ կարգաւորման դրոյթների շուրջ կողմերի դիրքորոշումները կը մօտենան, եւ գործընթացը կ'ակտիւանայ: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ դարաբաղեան հիմնախնդիրը եւ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը, այդ թիւում նաեւ՝ սահմանների բացումը, ԱՄՆ-ն դիտարկում է միմեանց հետ փոխկապակցուած: Ուստի պատահական չէ, որ հայ-թուրքական երկխօսութեան հետ մեկտեղ, ջանքեր են գործադրուում նաեւ դարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման գործընթացը արագացնելու ուղղութեամբ:

**ՄԱՆՈՒԷ՛Լ ՄԱՆՈՒԷ՛ԼԵԱՆ
«ՀԱՅԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»**


ՐԱՅ-ԹՈՒՐԷ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԸՍՈՒԱԾԸ ԱԲԵԼԻ ԱՌՋԵ՛Պ

Ինչ որ մի պահ թուում էր, որ հայ-թուրքական յարաբերութիւնն ասուած գործընթացը, որ մեկնարկեց ֆուտբոլային դիւանագիտութիւն կոչուած հրաւերով, մտել է սառեցման փուլ եւ փաստացի ոչինչ տեղի չի ունենում, ձեւական մանդիպումներից բացի, որոնց ընթացքում յայտնի էլ չէր, թէ ինչ են քննարկում ասենք Սերժ Սարգսեանն ու Ռեջեփ Թայիփ էրդողանը, կամ Ալի Բաբաջանն ու էրդուարդ Նալբանդեանը: Սակայն վերջին շրջանում մէկէն սկսեցին խօսակցութիւններ այն մասին, որ անար որ է հայ-թուրքական սահմանը բացուելու է: Սա ինքնին բաւական տարօրինակ է, նկատի ունենալով այն, որ սովորաբար այդօրինակ «նուաճումների» հնարաւոր է լինում հասնել երկարատեւ եւ յամառ բանակցութիւնից յետոյ: Մինչդեռ հայ-թուրքական բանակցութիւնն ասուածն ընդամէնը ներառել է նախագահների 1, արտգործնախարարների 3-4 եւ մէկ էլ Հայաստանի նախագահի ու Թուրքիայի վարչապետի 1 հանդիպում: Ընդ որում, այդ հանդիպումների զգալի մասը տեւել է ընդամէնը մի քանի որպէս, էլ չասած այն մասին, որ հանրութիւնն այդպէս էլ չի տեղեկացել այդ հանդիպումների բուն նպա-

տակին: Իհարկէ, եղել են խօսակցութիւններ նաեւ աւելի ցածր մակարդակով հայ-թուրքական դիւանագիտական այսպէս կոչուած գաղտնի հանդիպումների մասին: Այդօրինակ շփումները սակայն հայ եւ թուրք դիւանագետների միջեւ նորութիւն չեն եւ եղել են նաեւ նախորդ տարիներին: Սակայն, եթէ անգամ համարենք, որ բանակցութեան արդիւնաւէտութեանը նպաստել են նաեւ այդ շփումները, միեւնոյն է, գաղտնի օրակարգով բանակցութեան արդիւնաւէտութիւնը միշտ էլ կասկածելի է: Հայ-թուրքական սահմանի բացման մասին խօսակցութիւնների յորձանոտում այդ մասին կարծես թէ ոչ ոք չի խօսում եւ յիշում: Ուեւ մէկին կարծես թէ չի հետաքրքրում, թէ ինչ հարցերից է իրականում կազմուած հայ-թուրքական բանակցութեան օրակարգը եւ ումից է այդ օրակարգը պահուում գաղտնի: Ումից են կողմերը օրակարգը թաքցնում՝ հայ հասարակութիւնից, թուրք հասարակութիւնից, Ադրբեջանից, Ռուսաստանից, Ամերիկայից, Բուրկինա Գասուից, թէ պարզապէս չար աչքից: Ինչու է այդ օրակարգը պահուում գաղտնի:

Օրինակ, ամերիկացի եւ թուրք դիւանագետները տարբեր առիթներով յայտարարում են, որ հայ-թուրքական յարաբերութիւնն ու Ղարաբաղի խնդիրը կապուած են իրար: Յետոյ հայ դիւանագետները հերքում են այդ յայտարարութիւնը, ասում են, որ այդպիսի բան չկայ: Հասարակութիւնն էլ ստիպուած է հաւատալ կամ մէկին, կամ միւսին: Ամենից ճիշդն իհարկէ փաստերին հաւատալն է, սակայն նախ դրանք այդքան էլ միարժէք չեն, իսկ բացի այդ էլ եթէ ամէն ինչ շարժապելու տրամաբանութեամբ առաջնորդուենք, ապա հայ-թուրքական յարաբերութեան կարգաւորման գործընթացը կարող ենք դիտարկել նաեւ համաշխարհային տնտեսական ճգնաժամի դէմ պայքարի կամ էլ զլորել տաքացման դէմ ձեռնարկուող միջոցառումների համատեքստում: Միակ փաստը, որը շօշափելի է, դա այն է, որ հայ-թուրքական բանակցութիւն կամ շփումներ կոչուած երեւոյթի օրակարգը պահուում է գաղտնի: Հետեւաբար շատ դժուար է ասել, որ եթէ իսկապէս ձեռք է բերուել սահմանի բացման կամ յարաբերութիւնն հաստատուելու համաձայ-

Մաք.բ էջ 18



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ

ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՏՕԲԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԵԱՆ
ԿԱԶՂԵՆ ԽՈՍԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԽԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ
Շեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՎԱՅԱՍՏԱՆ

«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ»-Ը ԿՐԿԻՆ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ Է ԿԱԼԱՆԱԲՈՐՈՒՄ ՊԱՏԳԱՍԱԲՈՐՆԵՐԻ ՅԱՐՑԸ

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՌԱՏԻՕ»:
Ազգային ժողովի այսօրուայ նիստում ընդգրկված «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւորները կրկին բարձրաձայնեցին Ազգային ժողովի՝ անցած տարի ընդունած որոշմամբ 4 պատգամաւորներին անձեռնմխելիութիւնից զրկելու որոշումը վերանայելու հարցը:

«7-ի գործով» մեղադրուող եւ ներկայումս անազատութեան մէջ գտնուող Ազգային ժողովի պատգամաւորներ Սասուն Միքայէլեանը, Յակոբ Յակոբեանը եւ Միսանիկ Մալխասեանը անցած ամիս դիմում էին ներկայացրել՝ պահանջելով խորհրդարանի արտահերթ նիստ հրահրել եւ վերանայել Ազգային ժողովի 2008 թուականի Մարտի 4-ի որոշումը իրենց պատգամաւորական անձեռնմխելիութիւնից զրկելու վերաբերեալ: Այդ որոշմամբ անձեռնմխելիութիւնից զրկուել էր նաեւ իրաւաւոր Սուքիասեանը, ով ներկայումս հետախուզման մէջ է:

«Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւորները հարց ուղղեցին Ազգային ժողովի նախագահ Հովիթ Աբրահամեանին, թէ ինչու հարցը չի օրակարգ մտել:

«Տեսնելով, որ մեր ընդունած որոշման հիմքը այլեւս գոյութիւն չունի, ինչը չենք ուզում անդրադառնալ», - ասաց ընդգրկմադիր

խմբակցութեան պատգամաւորներին Լարիսա Ալավերդեանը:

«Օրէնքները փոխուել են, ուժը կորցրած է համարուել 225 յօդուածի 3-րդ մասը, 300 յօդուածը ամբողջովին ենթարկուել է փոփոխութեան», - ասաց Զարուհի Փոստանջեանը՝ շարունակելով. - «Հետեւաբար, այն որոշումը, որ ընդունուեց մէկ տարի առաջ, որով անձեռնմխելիութիւնից զրկուեցին մեր գործընկերները, այլեւս պէտք է գոյութիւն չունենայ, եւ Ազգային ժողովը իրաւասու է ընդունել որոշում, որով կարող է ուժը կորցրած ճանաչել իր նախկին որոշումը»:

Ի պատասխան պատգամաւորների բոլոր հարցադրումներին, Ազգային ժողովի նախագահ Յովիթ Աբրահամեանը արձագանքեց, թէ խորհրդարանը քայլը կատարել է՝ փոփոխել է Քրէական օրէնագրքի 225 եւ 300 յօդուածները:

«Այսօր դատական պրոցէս է գնում, եւ մենք այլեւ միջամտելու, իմ կարծիքով, ցանկութիւն եւ օրէնքի թոյլտուութիւն չունենք: Դա դատական մարմինների գործն է: Ես առաջարկում եմ եւ յորդորում եմ իմ գործընկեր պատգամաւորներին, որպէսզի մենք դատական պրոցէսի ասարտից յետոյ փորձենք նախագահին առաջարկել այդ համաներման խնդիրը», - ասաց Ազգային ժողովի նախագահը:

ՅԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԿ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՍՊԱՆՆԵԼ Է ՄԻԻՍԻՆ

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՌԱՏԻՕ»:
Հայաստանի Հանրապետական կուսակցութեան խօսնակ էդուարդ Շարմազանովի հաւաստմամբ՝ Ապրիլի 2-ին տեղի ունեցած սպանութիւնը, որն անմիջականօրէն առնչուում է Երեւանի աւազանու առաջիկայ ընտրութիւններում Հանրապետականի ցուցակում ներգրաւուած անձանց հետ, «կենցաղային խնդիր է եւ որեւէ քաղաքական ենթատեքստ չունի»:

«Պաշտօնապէս յայտարարում եմ, որ սա որեւէ քաղաքական ենթատեքստ չունի եւ կապուած չէ Հանրապետական կուսակցութեան գործունէութեան, եւ ոչ էլ աւագանու ցուցակների հետ», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Շարմազանովի:

Հայաստանի ոստիկանութեան օպերատիւ ամփոփագրում տուեալ միջադէպի վերաբերեալ ասուած է. - «Ապրիլի 2-ին, ժամը 23:20-ին, հիւանդանոցից ոստիկանութեան Մալխասեանի բաժնում ահազանգ է ստացուել, որ որովայնի մասում ստացած հրազէնային վնասուածքով իրենց մօտ է տեղափոխուել 1976 թուականին ծնուած Կարէն Յակոբեանը, որը, գիտակցութեան չզալով, մահացել է: Պարզուել է, որ նոյն օրը, ժամը 22:00-ից 22:30-ն ընկած ժամանակահատուածում, Բաֆֆու փողոցի թիւ 85 շէնքի ետնամասում հրազէնային վնասուածքը Կարէն Յակոբեանին հասցրել է անյայտ անձը եւ դէպքի վայրից դիմել փախուստի: Դէպքի վայրից գննութեամբ յայտ-

նաբերուել են արեան հետքեր եւ 4 պարկուճ: Կատարուում է նախաքննութիւն»:

Որոշ լրատուամիջոցների տեղեկութիւններով, Կարէն Յակոբեանին, ով զբաղեցնում էր մայրաքաղաքի աւագանու ընտրութիւններում Հանրապետականի առաջադրած համամասնական ցուցակի 101-րդ հորիզոնականը, հրազէնային վնասուածք է հասցրել Մալխասեան-Սեբաստիա թաղային համայնքի աւագանու անդամ, 1981 թուականին ծնուած Արթուր Սեդրակեանը, ով Հանրապետականի ցուցակում 43-րդն է: Նոյն աղբիւրների փոխանցմամբ՝ աւելի ուշ Սեդրակեանն ինքնակամ ներկայացել է ոստիկանութիւն:

Կատարուածի վերաբերել մամուլում չըջանաւուում է երկու հնարաւոր դրվագաւածաւ. առաջին՝ որ դա վաղուցուայ վէճի հետեւանք է եւ տնտեսական հիմք ունի, եւ երկրորդ՝ որ հակամարտութիւնը կապ ունի աւագանու առաջիկայ ընտրութիւնների հետ: «Դա արդէն իրաւապահ մարմինների տիրոջութում է, իրենք նախաքննութիւնը կը կատարեն եւ կը ներկայացնեն հասարակութեանը: Ինչ վերաբերում է տարբեր ասեկոսներին կամ մամուլում հրապարակուած տարբեր երեւոյթներին (վարկածներին), դրանք որեւէ կապ չունեն կուսակցութեան հետ, ոչ էլ քաղաքական տարաձայնութիւնների թեմա են», - յայտարարեց Հանրապետական կուսակցութեան խօսնակը:

ՅԱԿ-Ի ՊԱՅՔԱՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՈՒ ԅԱՆՑԱԲՈՐՈՒԹԵԱՆ ԴԵՍ Է

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»:
Աւագանու ընտրութիւնները ՀԱԿ-ի համար կազմակերպուած յանցաւորութեան դէմ պայքարի ձեւ են, - այսօր յայտարարեց ՀԱԿ ներկայացուցիչ Դաւիթ Շահնազարեանը:

Ըստ նրա, Լեւոն Տէր-Պետրոսեանի մրցակիցը երբեք չի եղել կոնկրետ մի անձ, ասենք Սերժ Սարգսեանը, կամ առաւելեւս հիմա Գագիկ Բեգլարեանը. «Տէր-Պետրոսեանի թշնամին եղել է բոլորութիւնը, կեղծիքը, այլանդակութիւնը»:

Շահնազարեանը եւս մէկ անգամ նշեց, որ իրենց համար յեղափոխութիւնը լաւ է գիտութեան մէջ եւ մշակոյթի, բայց ոչ երբեք քաղաքականութեան: Եւ որպէս դրա բացասական օրինակ բերեց Վրաստանը: Համաժողովրդական շարժումը, ըստ Շահնազարեանի, կը ստիպի իշխանութիւններին գնալ ընտրութիւնների արտահերթ նախագահական, խորհրդարանական, բայց ոչ յեղափոխութեան: Դա լաւ արդիւնքի երբեք չի բերում:

Դաւիթ Շահնազարեանի գնահատմամբ, ՀԱԿ-ի շանսերը ընտրութիւններում 75-80 տոկոս են: Սոցիոլոգիական հարցումներին



ՀԱԿ ներկայացուցիչ Դաւիթ Շահնազարեան

Շահնազարեանը տուրք չի տալիս, սակայն յիշելով յայտնի սոցիոլոգների կանխատեսումները նախագահական ընտրութիւններից առաջ՝ 2,3 տոկոս Լեւոն Տէր-Պետրոսեանի համար, եւ համեմատելով դրանք պաշտօնական արդիւնքների հետ, ըստ որոնց առաջին նախագահը հաւանաբար 22 տոկոս, Շահնազարեանը եզրակացրեց. «Դե հիմա 35-40 տոկոսը բազմապատկէք 7 անգամ, եւ կ'ստանաք այն հնարաւորութիւնները, որ ունի ՀԱԿ-ը»:

ՊԱՏՐԱՍ ԵՆ ԱՆԳԱՍ ԿԱԼԱՆԱԲՈՐՈՒԵԼ



Փաստաբաններ Արթուր Գրիգորեանը, Արա Զաւարեանը եւ Դիանա Գրիգորեան

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»:
«Մենք ուզում ենք յայտարարել, որ չենք պատրաստուում քննիչի հրաւերով ներկայանալ եւ մասնակցել որեւէ քննչական գործողութեան, քանի որ մենք աւելին քան բաւարար հիմքեր ունենք ոստիկանութեան քննիչի իրաւասութիւնը չընդունելու: Հետագայ քննչական գործողութեան կը մասնակցենք միայն այն դէպքում, երբ հաւասարութեան պայմաններում կը քննարկուի եւ մեզ վերազրուող յանցագործութիւնը, եւ մեր բողոքը», - լրագրողների հետ հանդիպման ժամանակ յայտարարեցին փաստաբաններ Արթուր Գրիգորեանը, Արա Զաւարեանը եւ Դիանա Գրիգորեանը անդրադառնալով դատաւոր Եւա Դարբինեանի կողմից դատախազութիւն ներկայացրած բողոքին:

Արդիւնքում քրէական գործ է շարուցուել փաստաբանների նկատմամբ: Փաստաբաններն իրենց կողմից եւս բողոք են ներկայացրել դատաւոր Եւա Դարբինեանի դէմ: Յիշեցնենք, որ դատաւորի կողմից

կարգապահական վարոյթ սկսելու որոշումը կայացուել էր «Պիցցա դի Ռոմայի» աշխատակիցներ Անուշ Ղաւալեանի եւ Գէորգ Սաֆարեանի դատաւարութիւններից մեկի ժամանակ: Փաստաբանները, չհանդուրժելով դատաւորի ապօրինութիւնները, լքել են դատական նիստերի դահլիճն ու չեն մասնակցել մի քանի դատական նիստերի:

Փաստաբաններն այսօր նաեւ յայտարարեցին, որ քննչական մարմին չեն ներկայանալու անգամ, եթէ այն որոշի իրենց նկատմամբ կիրառել հարկադրանքի միջոցներ ընդհուպ մինչեւ կալանաւորման ձեւով խափանման միջոցի կիրառումը: «Մենք պայքարելու ենք մինչեւ վերջ: Այսօր գործ ունենք միահիւստուած փտած դատախազադատական մի համակարգի հետ: Կամ այն պիտի այսուհետ վերածուի արդարադատութիւն իրականացնող դատական համակարգի, կամ մենք թոյլ կը տանք յայտարարել, որ ՀՀ-ն հակաօրոգովրդական պետութիւն է, - յայտարարեց Արթուր Գրիգորեանը:

ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԸ ԱՌԻԹՈՎ ԻՆՔՆԱՐԴԱՐԱՑՈՒՄԻ ՁԱԽՈՂ ՓՈՐՁ ՍԸ

ԱՀԱՐՈՆ ԾԻՐԻՄԱՆՆԱՆ

Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններու նախօրէին, լրատեստղական միջոցներով քարոզչական արշաւը աստիճան առ աստիճան ջերմութիւն կ'արձանագրէ դժբախտաբար: Ժողովրդավար հասարակարգի մէջ այս գործընթացը օրինաչափ երեւոյթ մըն է ինքնին եւ առանձնապէս լուրջ ազդեցութիւն մը չունենար ընտրապայքարին մասնակցող քաղաքական հոսանքներուն եւ նոյնիսկ հանրային կարծիքին վրայ: Ընտրապայքարին մասնակից հոսանքներն ու քուէարկողները ժողովրդավարական գիտակցութեան մակարդակ մը կ'արտայայտեն ի վերջոյ: Կարելի է գայն անուանել ընտրական մշակոյթ: Իրողութիւն մը, որմէ շատ հեռու է Միջին Արեւելքի ու Լիբանանի քաղաքացին առհասարակ:

Ընտրական ասեկոսներէն հետոս չէ նաեւ լիբանանահայ համայնքը: Իւրաքանչիւր ընտրութեան նախօրէին՝ արդէն սովորական դարձած բառեր, բառակապակցութիւններ, որոնք նոյնպէս կ'արտայայտեն մշակոյթի մը պատկերը... տխուր պատկեր մը:

Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններու նախօրէին եւ ընդհանրապէս գաղութահայ կեանքի մէջ, քաղաքական հատուած մը, համայնքին իսկական մտահոգութիւնները լքած տոկոսային համեմատութիւններով կը զբաղի: Հայութեան անունով խօսիլը դարձած է անձնական դրամագլուխ: Հայութիւնը իրմով ծնաւ եւ իրմով պիտի բարձրանայ Բարձրեալին մօտ...:

Մենք կը հաւատանք, որ իւրաքանչիւր քաղաքական հատուածի իրաւունքն է իր համոզումներուն լոյսին տակ, քաղաքական թէզի մը կամ տեսակէտի մը պաշտպանութիւնը: Իւրաքանչիւրին ազատ իրաւունքն է ըստ իր հայեցողութեան՝ ընտրական գիտակցութիւններու, նոյնիսկ քաղաքական գիտակցութիւններու ընտրութիւնը: Մեր կուսակցութիւնը խորհրդարանի ընտրութիւններուն կը նախապատրաստուի այս համոզումով:

Մենք կը հաւատանք Մարտ 14-ի քաղաքական դրոյթներուն, մեր ընտրարշաւը պիտի կատարենք, անոր կարգախօսները ջատագովելով միայն, եւ ոչ՝ մեր ընդդիմախօսներուն տեսակէտները քննադատելով: Պիտի չփափաքէինք այս մասին անդրադառնալ բաց եւ այնպէս հայկական իրականութեան մէջ տեղի կ'ունենան զարգացումներ որոնք լուսաբանութեան կը կարօտին: Մեր պաշտօնակից «Ազդակ» օրաթերթի Հինգշաբթի, 2 Ապրիլ 2009-ի Ա. էջին վրայ

Շաբ.ը էջ 17

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻ ԾԱՆԱՊԱՐՅԻՆ

ՎԱՀԱՆ ԾԻՐԻՄԱՆՆԱՆ


Հայաստանի իշխանութիւնը յամառօրէն չի ուզում բաց աչքերով նայել քաղաքական նոր իրողութիւններին: Վրաց-ուսական պատերազմը եւ Ռուսաստանի ամրապնդումը Անդրկովկասում, ուս-թուրքական եւ ուս-ատրպէյճանական ակտիվ բանակցութիւնները, Թուրքիայի, Ուկրաինայի, երկու միջուկային երկրները՝ Պակիստանի եւ Իսրայէլի ակտիւ աջակցումը Ադրբեյջանի միլիտարիզացմանը, ԱՄՆ-ի պարտութիւնը Իրաքում (շուտով՝ նաեւ Աֆղանստանում), ԱՄՆ-ի ստեղծած միջազգային ֆինանսական համակարգի փլուզումը, Վրաստանի քայքայման եզրին յայտնուելը, միջազգային կառուցների յստակ հակահայաստանեան (երբեմն՝ նաեւ արդարացի) կեցուածք պէտք է ստիպէին Հայաստանի իշխանութիւններին օր ու գիշեր աշխատել, նուազագոյնը՝ գոնէ, երկիրը վտանգներին նախապատրաստելու կամ «որ ամենաճիշդն է՝ այս նոր իրողութիւնները ի շահ Հայաստանը չէր կարող կանխել թուարկուած վտանգների առաջացումը: Սակայն կարող է եւ պարտաւոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպէսզի այդ վտանգները չվերածուեն երկրի համար սպառնալիքների: Իսկ դրա ճանապարհը մէկն է՝ Հայաստանը պէտք է հուլիսեմը եւ բովանդակութեամբ դառնայ ազգային պետութիւն: Դա նոյն սահմանադրական, իրաւական, սոցիալական պետութիւնն է՝ միայն մէկ տարբերութեամբ՝ պետութիւնը գործում է Ազգային

գաղափարի եւ Միասնական նպատակի իրականացման ծրագրով: Առանց դրա Հայաստանը, թշնամիների շրջապատում եւ սպառնալիքների յորձանուտում, չի կարող գոյատեւել որպէս հայկական աշխարհ, սերունդներին չի կարող ապահովել հայկական ապագայ: Այս պարզ ճշմարտութեան չընկալումը մերօրեայ ամենավտանգաւոր իրողութիւններից մէկն է: Ո՞րն է Հայաստանի Ազգային գաղափարը եւ Միասնական նպատակը: Արցախը: Այսօր Արցախը անկախացած, օրէնքի գերակայութեան ճանապարհը բռնած երկիր է, ընդ որում՝ աւելի քան Հայաստանը: Խնդիրը Արցախի վերականգնման, վերաբնակեցման եւ կառուցման մէջ է: Եթէ Հայաստանը կառավարուէր համաձայն Ազգային գաղափարի եւ Միասնական նպատակի, ապա այսօր վերակառուցուած կը լինէր Շուշին, ոչ թէ անմարդաբնակ ու մեռած Հիւսիսային պողոտան Երեւանում: Ոչ թէ հազարաւոր «Չիպերը» կը վիտային Երեւանում, այլ Արցախի հողերը կը լինէին ոռոգելի, իսկ գիւղերը կ'ունենային խմելու ջուր, եւ Հայաստանի պարենային անվտանգութեան 30 տոկոսը կ'ապահովէր Արցախը: Ոչ թէ Երեւանում կազինոները կը բազմանային անկի նման, այլ Արցախի բնակչութիւնը՝ ի հաշիւ վերաբնակեցուածների եւ վերադարձուածների: Եթերը կ'աշխատէր ոչ թէ սեփական հասարակութեան դէմ, այլ թուրք-ադրբեյջանական ինֆորմացիոն ազդեցութեան դէմ: Օլիգարխները ներդրումներ կ'անէին ոչ թէ Դուբայ

Շաբ.ը էջ 16

Բնորոշիչ

ԵՐԸՍ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՇԱՐԱՆԸ
Ձեր Ձառակին Լաւագոյն Գաւաթաբարակութեան Համար



AGBU PASADENA HIGH SCHOOL
(WASC ACCREDITED HIGH SCHOOL)


New Student Enrollment
Grades: 9-12

- College Preparatory Academic Program
- Honors and Advance Placement (AP) Level Instruction in All Subject Areas
- Small Class Sizes and Individual Attention
- Promoting Personal Growth and Academic Success
- Comprehensive Armenian Curriculum
- College Counseling and Annual University Visitations
- Co-curricular and Extra Curricular Activities Including Competitive Sports
- Safe and Secure Environments; Closed Campus


Make the Quality Choice...
Choose **AGBU High School - Pasadena** for your child's high school education.

For more information, campus tour and meeting with the administration, call:
626 794-0363
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104
(CORNER OF ALTADENA DRIVE AND MOUNTAIN STREET)

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու Քայքայութեան Բարձրագոյն Բուժում:
Ֆիզիոթերապիա, վզի, մէջքի, բազային եւ մկանային ցաւեր:
Ինքնուշարժի վթարի եւ տեսողական պատուած վնասումներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՐԱՅ ԹՈՒՐԷ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

ԶԱԻԷՆ ԽԱՆՃԵԱՆ

Հայ թրքական յարաբերութիւնները դարաւոր պատմութիւն ունին: Մենք այսօր պիտի չանդրադառնանք այդ պատմութեան:

Սակայն որպէսզի կարենանք յարաբերական եզրի մը վրայ դնել այդ յարաբերութիւնները, եւ բաղդատական մը ընել, պատահողուած կը զգանք ունենալ մէկնակէտ մը: Այդ մէկնակէտը Հայաստանի առաջին անկախ հանրապետութեան անկման շրջանն է:

Դեկտ. 2, 1920ի համաձայնութեամբ, կնքուած Ռուսական Խորհրդային Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ, Հայաստանը կը յայտարարուի անկախ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն:

Նոյն օրուայ կէս գիշերէն ետք Ալեքսանդրովի մէջ կը ստորագրուի հայ թրքական հաշտութեան դաշնագիրը որուն ամփոփ պայմաններէն երրորդը ըստ Սիմօն Վրացեանի, Հ. Հ. հատորին կը յայտնաբերէ թէ «հայերը հրաժարուած են Սեւրի դաշնագրից...»

Իսկ Մարտ 16, 1921ի Մոսկուայի՝ վաւերացուած Հոկտ 13, 1921ի Կարսի դաշնագրով, կնքուած իր կազմին մէջ գտնուող Քէմալական Թուրքիոյ եւ նորաստեղծ Խորհրդային Հայաստանի միջեւ, Կարսի նահանգը եւ Սուրմալուն պաշտօնապէս կը յանձնուէր Թուրքիոյ:

Նախապէս Նոյեմբեր 6, 1920ի Կարսի անկումէն ետք հաստատուած զինադադարի պայմաններուն ակնարկելով Ս. Վրացեան կ'ըսէ «զինադադարի պայմանները ցոյց տուին թէ Քեմալի Քարապէքիրը անողորմ էր հայոց հանդէպ»:

Վերջապէս հետեւելով Հոկտ. 13ի Կարսի դաշնագրի երօրեայ բանակցութիւններու նկարագրութեան, դժուար չէ եզրակացնել թէ Քեմալի Քարապէքիրը տիրող ուժն էր շրջանին մէջ:

Ահա այն խղճալի, ցաւալի եւ անհաւասար դիրքերու վրայ գտնուող հայ թուրք յարաբերութիւններու վիճակը, Հայաստանի Հանրապետութեան անկումի եւ Խորհրդային Հայաստանի հաստատումի օրերուն, որ մէկնակէտ կը ծառայէ մեր օրերու յարաբերութիւններուն, նկատի ունենալով թէ 1921էն ետք եւ մինչեւ 1991ի վերանկախացումը այդ յարաբերութիւններու ուղիին եւ ճանապարհը կ'անցնէր Մոսկուայից եւ որու բանալին եւ պաշտօնական խօսակցութիւն էր Քրեմլինը:

Ես պիտի ուզէի ներկայի հայ թրքական յարաբերութիւնները գետեղել երեք անջատ առանցքներու վրայ:

Ա. Պետութիւն - Պետութիւն
Բ. Պետութիւն - Ազգային

տեղական փոքրամասնութիւն
Գ. Պետութիւն - Սփիւռք

Ա. Պետութիւն - Պետութիւն
Բաղդատած Քեմալի Քարապէքիրի զրկանքի, Չարդի, գրաւման, քանդումի եւ նուաստացումի օրերուն, այսօր հակառակ դիւանագիտական յարաբերութիւններու չգոյութեան, հակառակ սահմաններու փակ ըլլալուն, հակառակ կիրառելի միջոցների, Հայաստանի եւ Թուրքիայի արդէս ՄԱԿի անդամ անկախ պետութիւններ, քաղաքավար յարաբերութիւններու ծիրին մէջ կը գտնուին:

- Օղանաւային անարգել երթեւեկը արդէն տասնամեակէ մը աւելի կեանք ունի:

- Հայ եւ թուրք քաղաքացիներ փոխադարձ այցելութիւններ կու տան եւ կեցութեան կամ անցքի հրաման կամ իրաւունք կը ստանան:

- Երկու երկիրները միասնաբար հաշտ անդամներ են Սեւ Մովսէս կամ Կովկասեան տարածքի հետ առնչութիւն ունեցող զանազան կազմակերպութիւններու:

- Աւելի քան տասնամեակէ մը ի վեր, չըսելու համար գրեթէ անկախութենէն ի վեր, արագորէն ծաւալող ընթացքով մը եւ ոտնազնդակի դիւանագիտութեամբ զագաթնակէտի մը հասած, հայ եւ թուրք պետական բարձրաստիճան պաշտօնատարեր յաճախակի, բացառապէս կամ դուրսի բանակցային հանդիպումներ կ'ունենան ոստոստելով Եւրոպական քաղաքներու կամ զբօսավայրերու մէջ:

Դէպի ուր կ'ընթանան հասունօրէն յի այս յարաբերութիւնները եւ ինչ է մասին մէկ կողմի շարժումի՞նք եւ ուղղակարութիւնը դժուար է բացայայտօրէն լուսարձակի տակ առնել:

Անկախ ներքին շահագիտումներէ մղուած ըլլալու հարկադրանքին՝ ոչ ոք կրնայ ուրանալ հայրենի իշխանութիւններու արդար իրաւունքը, բնած հայրենաբնակ հայ ժողովուրդի կենսամակարդակի բարձրացումն էլ այլ կարեւոր մտահոգութիւններէ՝ բարելաւելու հայ թրքական պետական մակարդակի վրայ մշակուած յարաբերութիւնները:

Ռեբիկոնը սակայն՝ մարմնացած աշխարհասփիւռ հայ ժողովուրդի ցեղասպանութենէն եւ դարաւոր հայրենիքի կորուստէն ծնած դատի արդար լուծմամբ, կարելի չէ անցնիլ:

Սփիւռքը, հակառակ գինք օրինականօրէն միաւորող կառուցներէ զուրկ ըլլալուն, պարտի բարոյապէս կանխարգիլել Հայաստանի իշխանութիւնները, իր հաշտնքն եւ առանց իր գիտակցութեան, ցեղասպանութեան վերաբերեալ որե-

Շարք էջ 17

ՄԻԱԼ ԲԱՆ ՄԸ ԿԱՅ ՐԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ԾԱՌՈՒԹՅՆ ԴԱՒԻԹԵԱՆ

Աւելի քան 150 տարիներ առաջ էմբրսըն կը գրէր «ճշմարտութեան ամէն մէկ բռնաբարում, ոչ միայն մասնակի ինքնասպանութիւն է ստախօսին համար, այլ նաեւ դաշունահարում՝ մարդկային հասարակարգի առողջութեան»: Ասկէ կարելի է հետեւցնել, որ այն հասարակութիւնները, ուր սուտն ու կեղծիքը յաճախակիօրէն կը կիրառուին, ուր վստահութեան պակաս կայ, անոնք առողջ չեն ու հետեւաբար չեն կրնար յառաջդիմել:

Երբ ակնարկ մը կը նետենք Հայաստանի գէթ նոյնիսկ անցնող մէկ տարուան (չ'ըսենք տարիներու) իրադարձութեանց վրայ, յստակ կը դառնայ էմբրսընի խօսքին ճշմարտացիութիւնը:

Ինչո՞ւ համար Տիգրան Թորոսեաններ եւ Վարդան Օսկանեաններ միայն իշխանութենէ հեռանալէ ետք կը յայտնեն կարծիքներ, որոնք եթէ յայտնած ըլլային իշխանութեան մէջ եղած ժամանակին, շատ աւելի օգտակար հանդիսացած կ'ըլլային հասարակութեան առողջացման: Անցնեալ ամիս, Տիգրան Թորոսեան Հայաստանի «բարոյահոգեբանական վիճակը խիստ անկումային» կը գտնէր: «Օրէ օր խորանում է դժգոհութիւնը, բազմաթիւ հարցեր մնում են անպատասխան եւ կտրուկ մեծանում է անվստահութիւնը իշխանութիւններու, դրամի, վարդաւայ օրուան, կատարողը քայքայի նկատմամբ»:

Իսկ Վարդան Օսկանեան պատրաստակամութիւն կը յայտնէր ստորագրել Լեւոն Տէր Պետրոսեանի Մարտ 1-ի ելոյթի խօսքերուն տակ, յայտարարելով որ պէտք է «առողջացնենք մեր քաղաքական դաշտը, համապատասխան պայմաններ ստեղծենք արդար ընտրութիւններ ի միջոցաւ ճիշտ հակակշիռներ ստեղծելու համար»: Կ'արժէ այստեղ մէջբերել իրենց նախկին գործընկեր, Հ.Հ.ական Արմէն Աշոտեանի մեկնաբանութիւնը՝ «Պարոն Օսկանեան իրականում այնքան հեռու է եղել հայ իրականութիւնից որ իր կարծիքով նման յայտարարութիւններով փորձում է արժանանալ հասարակութեան համակրանքին եւ վստահութեանը: Հայ հասարակութիւնն իրականում չի հանդուրժում այն ֆենոմենը, երբ մարդու մտածելակերպը փոփոխուած է ըստ աշխատանքային աթոռի»: Հետաքրքիր պիտի ըլլայ տեսնել թէ այս գծով ինչպէ՞ս պիտի արտայայտուի Աշոտեան, երբ ինք ալ օրին մէկը դուրս գայ իշխանութենէն:

Ինչո՞ւ համար Հ. Յ. Դաշնակուցիցներ, որ աւելի քան 10 տարիներէ ի վեր իշխանութեան մէջ է, ամէն մէկ ընտրութենէ

առաջ, յանկարծ ընդդիմադրութեան դեր կը խաղայ: Քանի մը օրեր առաջ, Երեւանի քաղաքապետական ընտրութիւններուն Հ.Յ.Դ.ի ցուցակը գլխաւորող Ազգային ժողովի պատգամաւոր Արծուիկ Մինասեանը, ընտրութիւններէն ետք նոր «կոալիցիա» ստեղծելու «Առաւում»-ի հարցին կը պատասխանէր «Կ'ուզենայի որ ստանայինք շատ ձայներ (ոչ միայն 7% յաղթահարում) եւ մեր հասարակութիւնն ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ (ընդգծումը մեզմէ, ՅՏԴ) տեսնէր թէ իսկապէս ո՞րն է կառավարման արդիւնաւէտ մոդելը»: 10 տարիներէ ի վեր ինչ կ'ընէին շտկելու անարդիւնաւէտ մոդելը:

Յստակօրէն, սխալ ան մը կայ Հայաստանի մէջ, երբ պատասխանատու պաշտօններ վարողներու մօտ աւելի ակնյայտ է անձնական եւ հատուածական շահերու հետապնդումը, ի հեճուկս ընդհանրականի եւ ազգայինի:

Սխալ բան մը կայ, երբ Երեւանի քաղաքապետական ընտրութիւններուն Հանրապետական Կուսակցութեան աւագանիներու ցուցակի 43րդ անուն Արթուր Սեդրակեանը կը կրակէ ու կը սպաննէ նոյն ցուցակի 101րդ անուն Կարէն Յակոբեանի վրայ...

Սխալ բան մը կայ, երբ Արցախի ազատագրութեան համար մարտնչած Սփիւռքահայ ժիւրայր Սեֆիլեանին Հայաստանի քաղաքցիութիւն շնորհելը տարիներով կը զլացուի, իսկ պրագմաիստ փոփոխող իրազատողներուն շուտով կը շնորհուի, հայեցի անուններով...

Սխալ բան մը կայ, երբ Ազգային ժողովի ՄԱՐԴՈՒ ԻՐԱՆԻՆԻՔՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ (ընդգծումը մեզմէ՝ ՅՏԴ) յանձնաժողովի փոխ-նախագահ Ռաֆիկ Պետրոսեան կը յայտարարէ, որ ինչպէս ինք ըրած է Սովետի ժամանակ, հիմա ալ Հայաստանի պատուիրակութեան անդամները կոնյակով կրնան եսխվի-պատուիրակներէն աւելի նպաստաւոր որոշումներ կորզել, որովհետեւ «աղուհացը քոռացնում է մարդուն»:

Սխալ բան մը կայ, երբ Ազգային ժողովէն ներս 15 պատգամաւորներ, դատաւորներու աշխատավարձերու բարձրացման առաջարկին «դէմ» ելոյթներ կ'ունենան, բայց յաջորդ օրը «կողմ» կը քուէարկեն...

Սխալ բան մը կայ, երբ Լեւոն Տէր Պետրոսեանի Մարտ 1-ի ելոյթին, դրամի արժեզրկման մասին կանխատեսման պատասխանելու Ազգային ժողովի ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՒ ՊԻՏՏՃԵԹԱՅԻՆ (ընդգծումը մեզմէ՝ ՅՏԴ) յանձնաժողովի

Շարք էջ 17

STUT'P ԵՅԻ
BANKRUPTCY-Ի ՕՐԵՆՔՆԵՐԸ
ԿՕԳՆԵՆ ԶԵՂԻ,
ԶԱՆԳԱՅԱՐԷՔ

JANSEZIAN LAW FIRM, PC

If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!

225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101

Call Now for a FREE Consultation: **626-432-7209**

Nazareth V. Jansezian, Esq.

Ս ՁԱՏԻԿ

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ
ՍՈՒՐԲ ՁԱՏԿՈՒԱՆ ՔԱՐՈՉՐ**

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՍԵՌԵԼՈՑ ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ս. Յարուլթեան խորհուրդը աշխարհասփիւռ մարդկութեան կեանքին մէջ աստուածային զօրութեան բացայայտումին բարձրակէտն է, որուն պատճառով մարդուն կեանքը կը հաստատուի հաւատքի նոր մակարդակի մը վրայ, Աստուծոյ կողմէ մեզի տրուած կեանքը ապրելու համար տեսիլքներու առաջնորդութեամբ եւ կեանքը մշտապէս հրաշագործելու ներքին մղումով մը:

Կեանքը ընմբռնելու ու խորապէս հասկնալու համար բազում միջոցներու կը դիմենք, բայց երբ Սուրբ Յարուլթեան տօնին առաջ ենք կանգնած, ապա այն ժամանակ կը հասկնանք, որ Աստուծոյ միջամտութիւնն է այդ մարդկային կեանքին մէջ: Եւ երբ կը բանանք մեր միտքն ու հոգին ընդունելու համար Սուրբ Յարուլթեան խորհուրդը, նոյն այդ պահուն մեր մէջ կը զգանք նորոգութիւնը մեր հոգեւոր կեանքին եւ զօրեղ ներկայութիւնը Աստուծոյ:

Ս. Յարուլթեան խորհուրդը, ճառագայթումը քրիստոնեայ հաւատացեալին անձնական կեանքին մէջ թէ հաւաքականութեան մէջ, որ ինքնին Եկեղեցին է, հոգեւոր արթնութեան պահն է: Ինչքան ալ մտքով ու բանականութեամբ կ'ըմբռնենք Քրիստոսի աստուածային զօրութեան անչափելիութիւնը, տակաւին, սակայն, կայ հոգեւոր ապրումներու այն մակարդակը, որ բառերով կարելի չէ բացատրել: Ոչ թէ որովհետեւ անկարող ենք զգալու Յարուլթեան խորհուրդին պարզեւած զօրութիւնը, այլ պարզապէս բռնելով կարելի չէ բացատրել աստուածային զօրութեան տարողութիւնը: Մեր կեանքին մէջ կատարուող նորոգութիւնը զգալու գիտակցութիւնն ու զգացողութիւնը բաւական է, որ մեզ աւելի կը մօտեցնէ Աստուծոյ եւ մեր քայլերը կը հաստատէ ու կ'ամրապնդէ կեանքի այն ճանապարհին վրայ, որուն ամբողջ ընթացքին պարտ ենք գործադրել Քրիստոսի պատուիրանները:

«Քրիստոս Յարեալ Ի մեծեցնող Օրհնեալ Է Յարու Քիւնն Քրիստոսի»:

Երբ հաւատքով կը յայտարարենք Քրիստոսի Յարուլթեանը մեռելներէն, ճշմարտապէս մեր մէջ կը խեղդենք նաեւ խաւարի գործերը եւ կ'ուզենք մեր կեանքը դարձ-

նել լոյսին մատակարարումը: Որովհետեւ Քրիստոսի հրաշալի Յարուլթիւնը մեր հոգեւոր կեանքին վրայ տարածուած մշտականօրէն վառուած լոյսի կանթեղն է, որուն առաջնորդութեամբ պարտ ենք քայլել դէպի Աստուած, պարտ ենք հարազատօրէն կապուած մնալ մեր նախնեաց հաւատքի կեանքին, ու մանաւանդ մեզի բաժին ինկած ժամանակն ու միջոցները օգտագործելու Աստուծոյ աչքին ընդունելի կեանք մը ապրելու, բարի գործերու կատարումովը: Եւ որո՞նք են բարի գործերը, եթէ ոչ անպարտ պահպանումը մեր քրիստոնէական հաւատքին, ամրացնելու հայ ընտանիքի հիմքերը աւետարանական խորհուրդներով, պայծառացնելու Հայ Եկեղեցին ու դպրոցը, լայնօրէն բաց պահելու մշակութի տուներու դռները, ծառայելու Մայր Հայրենիքին ու Ս. Էջմիածնին եւ դառնալու բարի ու օրինակելի քաղաքացիները այս երկրին:

Քրիստոսի Յարուլթեան խորհուրդի ճշմարիտ իմաստը կը բացայայտուի մարդկային առօրեայ եւ հասարակական կեանքի մէջ, երբ մարդը կը նորոգէ իր հօտին կեանքը Աստուծոյ ձեռքերը դառնալու հօր տեսիլքով: Յարուլթեան խորհուրդը կ'իմաստաւորուի մեր ապրած կեանքի այն եղանակով, երբ որոշում կը կայացնենք ապրելու բարոյական կեանքի հայելին: Աշխարհի մարդկութեան կեանքը եթէ երբէք իր անդորրը կորսնցուցած է, ապա անոր գլխաւոր պատճառներն են ազատութիւնը, անպատասխանատու կեանքով դրսեւորած եսասիրութիւնը, մեր նմանին հանդէպ տրուելիք յարգանքի բացակայութիւնը: Եւ եթէ այսօր աշխարհը կը տառապի պատերազմներով, տնտեսական տագնապներով ու միլիոնաւոր մանուկներ զրկուած են տարրական սնունդէն, ապա այդ բոլորին պատճառները յտակ են արդէն ինչպէս արձանագրեցինք վերի տողերուն մէջ:

Քրիստոսի Յարուլթիւնը կը պարտաւորեցնէ մեզ կեանքը վերապրելու, հոգեւոր ծնունդով մը հրաշագործելու մեր կեանքի ընթացքը, ապրելու ստեղծագործ կեանքով ու լոյս դառնալու մարդկանց հոգիներէն ներս:

«Քրիստոս Յարեալ Ի մեծեցնող Օրհնեալ Է Յարու Քիւնն Քրիստոսի»:

Շաբ.ը էջ 19

**ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ
ԱՌԱՋՆՈՐԴԻ ՁԱՏԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՍԸ**

ԿԸ ՀԱՐԱՍԱՍ ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ

«Վիճակակից Քրիստոսի մահուան, մասնակից ենք մահուանորայարութեան» (Հոով. 6:5)

Մեր քրիստոնէական հաւատքը կը պատուիրէ որ հաւատանք ոչ միայն Քրիստոսի յարուլթեան՝ այլ նաեւ՝ մե՛ր:

Առաջին նայուածքով հեշտ չէ նման հաւատք մը դաւանիլը: Արդարեւ տարբեր է եւ դիւրաւ ընդունելի հաւատալ Քրիստոսի յարուլթեան, տրուած ըլլալով որ Ան Աստուած է, կեանքի ու մահուան տէր, որու իշխանութիւնը սահման չի ճանչնար, եւ տարբեր՝ հաւատալ յարուլթեան արարածի մը որ իր իսկ սահմանումով մահկանացու է, ուստի ենթակայ վերջնական ոչնչացումի, եթէ ոչ՝ հոգեպէս՝ գէթ ֆիզիքապէս:

Եւ սակայն, ամէն անգամ որ մենք Հաւատամքը կ'արտասանենք, հրապարակաւ կը դաւանինք՝ թէ մեր յարուլթիւնը եւս, նոյնիսկ մարմինով, մեր հաւատքին մաս կը կազմէ: Բայց թէ որչափով այս դաւանութիւնը առնչուութիւն ունի մեր ներկայ կեանքին հետ, այդ ուրիշ հարց է:

Հասկնալի է որ Աստուած իր ստեղծած անմահ հոգիները չաւտենապէս անմահ պահէ: Բայց անհրաժեշտ է որ այդ նոյն առանձնատկութիւնը շնորհէ նաեւ մարմիններուն՝ որոնք հոգին ստեղծուած են եւ հոգ պիտի վերադառնան, ինչպէս կը կարգանք սուրբ Գրքին մէջ:

Տրամաբանական ու բնական է որ մարմնի յարուլթեան հարցը մեր մտքին մէջ արծարծուի մերթ ընդ մերթ, մանաւանդ երբ Քրիստոսի Յարուլթիւնը տօնելու կը պատրաստուինք, ինչպէս այս օրերուս, քանի որ մին միւսին կապուած է անքակտելիօրէն: Եթէ կը հաւատանք որ Քրիստոս Յարուլթիւն առած է, չենք կրնար չհաւատալ որ մենք ալ Յարուլթիւն պիտի առնենք:

Եւ պատճառը բացայայտ է, եւ հիմնուած նոյնինքն Քրիստոսի խօսքին վրայ: Քրիստոսի խօսքերը կ'ընդունինք կամ ամբողջովին կամ բնաւ: Արդ ինքն է ըստղը. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, պիտի գայ ժամը երբ մեռելները պիտի լսեն Մարդու Որդիին ձայնը եւ գերեզմանէն դուրս պիտի ելլեն» (Յով. 5, 28):

Մեծ է սակայն փորձութիւնը՝ Քրիստոսի այս խօսքերը, հետեւաբար մեր յարուլթեան իմաստը,

փոխաբերական, խորհրդանշական իմաստով առնելու. այո, կայ մարդոց յարուլթիւն, կայ երկրորդ կեանք, բայց հոգիով, ոչ մարմնով: Հոգին սուրբ է, մարմինը՝ մեղաւոր: Առաջինը արժանի է վերապրելու, երկրորդը՝ ոչ:

Այս տարակոյսը, կամ թերահաւատութիւնը կը ծագի ոմանց մտքին մէջ հետեւեալ պատճառներով.

Նախ՝ կարելի է ակնկալել որ Աստուած յարուլթիւն տայ նաեւ մեր մարմիններուն: Կարծէք տարակուսէինք նոյնիսկ Աստուծոյ ամենազօր կարողութեան վրայ:

Սուրբ Գրքին մէջ բազմիցս կը տեսնենք աստուածային զօրութեան յայտնութիւնը՝ տեղեկքի ստեղծումին առաջին պահէն: Աւետարանը հրաշքներու անընդհատ շարունակութիւն մըն է: Հրաշքները առանցքը կը կազմեն Քրիստոսի երկրաւոր առաքելութեան: Հիւանդները բժշկել, հացերը բազմապատկել, փոթորիկը հանդարտեցնել, մեռելներուն յարուլթիւն տալ... կա՞յ միթէ ասկէ աւելի բացայայտ նշան եւ հօր ապացոյց աստուածային կարողութեան: Այն որ աշխարհը ոչինչէն ստեղծեց, որ ոչ միայն մեռելներուն՝ այլ նաեւ ինքնիրեն յարուլթիւն տուաւ, կարող պիտի չըլլա՞ց իր իսկ ստեղծած բոլոր էակներուն վերատին կեանք տալ:

Երկրորդ առարկուութիւն՝ դժուար է երեւակայել թէ ինչպիսի ձեւ ու կերպարանք պիտի առնէ մեր մարմինը՝ եթէ վերստանայ այնպէս ինչպէս որ է՝ ներկայ կեանքը. պիտի ունենա՞ց նոյն ֆիզիքական յատկանիշերը, մտային կամ հոգեկան նոյն յատկութիւնները:

Աստուածաբանները զանազան ձեւերով կը պատկերացնեն մարմինը՝ երկրորդ կեանքի մը մէջ. սակայն ոչ մէկը բացարձակ իրողութիւնը կրնայ պարզել, որովհետեւ սուրբ Գիրքը մեզ չի լուսաբաներ այդ մասին: Սակայն տրամաբանօրէն մտածելով, կը պատկերացնեն զայն օժտուած անհամեմատօրէն գերազանց յատկութիւններով՝ նոյնիսկ մարմնապէս, որովհետեւ մեր հոգին «փառաւորեալ» մարմնի մը պիտի միանայ: Այս կէտին մէջ ամէնքը համամիտ են Սուրբ Օգոստինոսին, որ կ'ըսէ թէ երկինքի մէջ մենք պիտի ըլլանք «ինչ որ ենք», պիտի պահենք մեր

Շաբ.ը էջ 19

SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN

(818) 500-9585
BMaronian@AOL.com

FAX **500-9308** ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԻՔԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱԹՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ԱՅՆԹԱՊԻ ԶԵՐՈՍԱՄԱՐՏԻ 89.ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՅԱՏՈՒԿ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆ

ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

Հայ Այնթապցիներու Մշակութային Միութեան նախաձեռնութեամբ կիրակի, 5 Ապրիլ 2009. յետմիջօրէի ժամը 2.00.էն սկսեալ, տեղի ունեցաւ Այնթապի Հերոսամարտի 89.րդ տարեդարձին նուիրուած ոգեկոչման բովանդակալից շքեղ հանդիսութիւն մը, ՀԲԸՄ-ի Ալէք Մանուկեան Կեդրոնի «Պոյաճեան» սրահէն ներս:

Այնթապցի պատկառելի ներկայութիւն մը եւ հիւրեր փութացած էին սրահ իրենց հայրենակցա-

յատուկ աւանդապահութեամբ, իր հոգեպարար ձայնով երգելէ ետք «Տէր Կեցոյ Դու...» օրհներգը, նաեւ օրհնեց սեղանները, ընթացք տալով հոգեճաշին:

Այնթապի Հերոսամարտի 89.րդ տարեդարձին նուիրուած ներկայ ընթացիկ հանդիսութիւնը՝ գերիչ էր իր գեղարուեստական յայտագրով: Զերմ էր իր իւրայատուկ այլ բովանդակալից հանդիսավարութեամբ: Տպաւորիչ էր ոճ ու գիտահետազոտական աշխատասիրութեամբ պատրաստուած գեկոչումով: Վերջապէս, ոգեկոչիչ էր իր



կան եւ ազգային տուրքը վճարելու բոլոր անոնց, այն մեծ ու փոքր, այլ թէ կին, կղերական թէ մշակութային գործիչ կամ քաղաքական առաջնորդ այնթապցի անվեհեր հերոսներու փաղանգին, որ մեծ Եղեռնի դժինք օրերուն, իրենց կեանքերը զոհեցին յանուն մշակութային դատարար օրրան Այնթապի ինքնութեան պահպանման, հողային տարածքներու պաշտպանութեան եւ հայրենանուէր այնթապցիներու ազատագրութեան:

Համանուն միութեան ատենապետ Պրն. Աւետիս Դէմիրճեան աւուր պատշաճի բարիգալուստի խօսքէն ետք, բեմահարթակ հրաւիրեց օրուան հանդիսավարուհին՝ բազմաշնորհ մտաւորական, հանրաժանօթ սամուկող Տիկ. Թագուհի Արզումանեանը, որուն բարիգալուստի եւ Հերոսամարտին ինկած քաջամարտիկներուն նուիրուած իր համառօտ ոգեկոչական ակնարկէն ետք, հրաւիրեց Վեր. Պարգեւ Տարազճեանը, որ օրհնէ օրուան հանդի-

պատգամախօսութեամբ: Իւրայատուկ ձեռնարկ մը, որուն համար պիտի արժէր ջերմօրէն շնորհաւորել կազմակերպիչ յանձնախումբի անդամները:

Իր բացման խօսքով հանդէս եկող շնորհալի հանդիսավարուհի Տիկ. Թագուհի Արզումանեան, ողջունելէ ետք Այնթապի Հերոսամարտին իրենց կեանքերը զոհած հայորդիները, առանձնակի գնահատանքի արժանացուց հերոսներ՝ Ատուր Լեւոնեանը, Ներսէս Քհնյ. Թաւուզճեանը եւ Աւետիս Գալէմքերեան, որոնց գերագոյնս գոհողութիւններով սատար հանդիսացած են Այնթապի ինքնապաշտպանութեան կռիւներուն: Թագուհին, ընտրած ըլլալով «Աղջկանց Վարժարանները Այնթապի մէջ», նիւթը, բարձր գնահատեց կանանց կրթական, մշակութային եւ կենցաղագիտական կեանքին զարգացման գծով այնթապահայութեան ընձեռած ուսումնա-

Շար.ք էջ 19

«ՄԵՐՏԻՆԵԱՆ» ՎԱՐժԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐՈՅԹ-ՁԵՌՆԱՐԿԸ

Մերտինեան հայ աւետարանական վարժարանի հոգաբարձութիւնը իր տարեկան ճաշկերոյթ-ձեռնարկով, յատուկ յարգանքով կը նշէ Միացեալ Նահանգներու մէջ առաջին հայ աւետարանական վարժարանին հիմնադրութեան տարեդարձը՝ վեր առնելով անոր հիմնադիրներուն երազը: Զեռնարկը ինքնաքննարկման առիթ մըն է հաստատութեան համար ու նաեւ յարմար առիթ՝ գնահատելու այն անհատները, որոնք հաւատքով, նուիրումով ու հաւատարմութեամբ տարիներ շարունակ ծառայած են այս հաստատութեան:

27րդ ճաշկերոյթ-ձեռնարկը տեղի ունեցաւ Միացեալ հայ աւետարանական եկեղեցւոյ Աւագեան « սրահին մէջ, Մարտ 7ին: Պատուոյ հիւրերուն մէջ էին Հիւսիսային Ամերիկայի Հայ աւետարանական միութեան գործադիր վարիչն ու անդամները, Հայ աւետարանական եկեղեցիներու հովիւներ, Արեւմտեան թեմի ներկայացուցիչը, պետական ներկայացուցիչներ, տնօրէններ եւ «Մերտինեան»ի մեծ ընտանիքի անդամներ:

Կազմակերպիչ յանձնախումբին ատենապետուհի Սեդա Նալպանտեանը ողջունեց ներկաները, ապա հրաւիրեց Արտակ քհնյ. Տէմիրճեանը, որ փոխանցեց Մուշեղ արք. Մարտիրոսեանի ողջոյնի ու շնորհաւորական խօսքը:

Օրուան հանդիսավարն էր դատարար Ալիս Ալթուն, որ պատշաճօրէն կատարեց իր պաշտօնը: Ան տուաւ «Մերտինեան»ի հակիրճ պատմականը եւ յիշեց էլիք Մերտինեանի խօսքը՝ «Այս բոլոր պատիկները իմս են», մատնանշեց աշակերտներու թիւին աճը, դասարաններու յաւելումը եւ «WASC»ի կողմէ վարկաւորումը 11 տարիներէ ի վեր:

Ապա ձեռնարկին եւ ճաշի օրհնութեան աղօթքը կատարեց Միացեալ հայ աւետարանական եկեղեցւոյ հովիւ վեր. Ճէյսըն Մաթոսեանը:

Հոգաբարձութեան ատենապետ տոքթ. Հրայր Աթիքեանը իր շնորհակալութիւնը յայտնեց բոլորին, որոնք գորավիզ կը կանգնին «Մերտինեան»ին:

Իր կարգին, Ամերիկայի հայ աւետարանական ընկերակցութեան (AMMA) գործադիր վարիչ էնտրու թորիկեան շնորհակալութիւն յայտնեց 27 տարիներէ ի վեր դպրոցին ծառայող բոլոր մարմիններուն եւ անհատներուն: «Մենք միշտ գոյատեւած ենք, քանի որ հաւատք ունինք», ըսաւ ան: Ան վեր առաւ Գրիգոր Լուսաւորիչի, Մեսրոպ Մաշ-



տոցի, Վարդան Մամիկոնեանի, Յեղասպանութեան զոհերու եւ վերապրողներու հաւատքը, թէ՛ այդ հաւատքի շարունակութիւնն է AMMA-ի առաքելութիւնը:

Ապա հանդիսավար ներկայացուց օրուան բանախօսը՝ դոկտ. Ալիս



Պետրոսեանը: Վաստակաւոր դաստիարակ եւ վարչական պատասխանատուն, որ 30 տարիներ ծառայած է Կլէնտէլի կրթաշրջանի բազմաթիւ ծրագիրներուն, բարեկարգութիւններով, առաջարկներով եւ անխոնջ ծառայութեամբ, 2008ին նշանակուեցաւ Փաստիմալի կրթաշրջանի կրթական գլխաւոր համակարգող: Դոկտ. Պետրոսեան իր խօսքին մէջ անդրադարձաւ աշակերտին ուսումնական յաջողութեան նպաստող երեք ազդակներու՝ դպրոց, տուն եւ համայնք:

Ընթերթի միջոցին, Չութակի վրայ մեղեդիներ նուագեց Ալէն Աղաճանեան: Ապա, «Մերտինեան»ի 7րդ կարգէն Շուշան Գալստեան արտասանեց Սիլվա Կապուտիկեանի «Խօսք իմ Որդուն»ը:

Վերջին խօսք առնողը եղաւ վարժարանի տնօրէն Յովակի Ինճէճիքեանը: Ան շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչ յանձնախումբին եւ ձեռնարկի մասնակիցներուն ու նշեց «Մերտինեան»ի յատկանիշ-

Շար.ք էջ 19

MEZZA NIGHT

Կազմակերպութեամբ՝

Ս.Գ.Հ.Կ. ՓԱՐԱՄԱԶ ՄԱՍՆԱՃԻԻՂԻ

Երեկոն կը խանդավառէ սիրուած երգիչ՝

Հրաչ Պողարեան

եւ իր նուագախումբը

Ծաբաթ, Ապրիլ 18, 2009, երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ

Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ

1060 N. Allen Ave., Pasadena, CA



Մուտքի նուէր՝ \$25.00

Massis Weekly

Volume 29, No. 12

Saturday, APRIL 11, 2009

Obama Calls Upon Turkey to Rectify Its History

“My Views Are on the Record and I Have Not Changed Them”

ANKARA -- U.S. President Barack Obama during his visit to Turkey on numerous occasions made reference to the Armenian Genocide, Turkish-Armenian relations, and minority rights.

President Obama stated during a joint press conference with Turkish President Abdullah Gul that “my views are on the record and I have not changed views” when asked by a reporter about his position on the Armenian Genocide.

During his address to the Turkish Parliament in Ankara, Obama called upon the Turkish government to rectify its past on the Armenian Genocide. “All of us have to change. And sometimes change is hard. Another issue that confronts all democracies as they move to the future is how we deal with the past. History is often tragic, but unresolved, it can be a heavy weight. Each country must work through its past. And reckoning with the past can help us seize a better future.”

Արարողութեան աւարտին, իմաստալից դամբանականով մը հանդէս եկաւ Արժ. Տ. Աբէլ Քհնյ. Մանուկեանը, որ անձամբ ճանչցած էր հանգուցեալը եւ տարբեր աւիթներով, ընդառաջելով իր հրաւիրներուն, եկած էր Շաս Սիւր Բօն՝ օրհնելու համար Հաճընցի հերոսամարտի զոհերու հողինքներուն նուիրուած ճիտապտուր-մատաղը կամ գոյգ քաղաքներու՝ Շաս Սիւր Բօնի ու Հայաստանի մէջ Նոր Հաճընցի միջեւ քոյր քաղաքներ դառնալու հանդիսութիւններուն աւիթի: Իր պատգամին մէջ դրուատելով հանգուցեալի մարդկային արժանիքները, ան ըսաւ. «Սարգիս Չուլֆեան» բացառիկ անձնաւորութիւն մը, եզակի անհատականութիւն մը, իսկական մարդասէր մը, օրինակելի եւ անկաշառ հայրենասէր մը, միաժամանակ՝ ճշմարիտ հաճընցի մըն էր: Հայն ու ֆրանսացիին իր անձին մէջ միացած էին առանց իրարու հետ խառնուելու, մին միւսին առանց ստորադաս ըլլալու կամ հոգեկան դոյզն իսկ բարդոյթի մը պատճառ դառնալու: Ընդհակառակը, իր անհատականութեան եւ խառնուածքին մէջ մին միւսը կը զօրացնէր, ու գինք կը դարձնէր ամբողջանուէր ծառայատիրութիւն դէպի մարդը՝ ֆրանսացիին եւ հայուն հաւասարապէս: Կը ծառայէր Ֆրանսայի իբրեւ իր ընտրեալ հայրենիքը՝ նաեւ Հայաստանի, որուն պատմական գիտակցութիւնը եւ կնիքը անաղարտօրէն իր հոգիին մէջ կը կրէր: Իր շուրջբոլորը բարեգործութեան տուած գոհունակութիւնը ունենալու ապրումով կը ներշնչէր՝ անկեալ ու կարելիէր մարդոց մէջ հպարտութեան եւ արժանապատուութեան գացումը վերականգնելու ի խնդիր: Հակառակ անոր որ իր աչքերը լոյսին բացած էր Ֆրանսայի հիւրընկալ երկիրներին տակ, կ'ապրէր պատմական Հաճընցի ու իր գոյութեանական արմատներով միշտ կապուած կը մնար անոր, ուստի՝ տարուէր տարի իր ծննդավայրին մէջ Հաճընցի հերոսամարտին յիշատակը կ'ոգեկոչէր, եւ մինչեւ հինգ հարիւր ներկաներու համար աւանդական ճիտապտուրի հիւրասիրութիւն կը կը կազմակերպէր, գոհուած հաճընցիներու եւ նահատակ հերոսներու հոգեոցն ի հանգիստ:

Բազմիցս գտնուած է Հայաստան, փութալով օգնութիւն բերել երկրաշարժին տուժած կարօտեալներու, հաշմանդամներու, որք եւ անօգնական երեխաներու, բուժարաններու, հիւանդատուներուն ,

Շաբ.ք էջ 17

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ
ՇԱՐԼ ԱԶՆԱԿՈՒՐԻ ԳԱՄԵՐԳԱՅԻՆ ՆՈՐ ՇՐՋԱՊՏՈՅՑԸ

Տիար Չարլ Ազնաւուր ֆրանսական հեռատեսիլի կայանին յայտարարած է որ յառաջիկայ ամիսներուն, երգահանդէսներու շարք մը պիտի տայ աշխարհի տարբեր երկիրներու մէջ: Ան Լոս Անճելոս գալով նոր ձայնասակաւուակ մը պիտի ձայնագրէ ճազային երաժշտութեամբ:

Նշենք որ հայազգի երգիչը վերջերս ստացած է հայկական անցագիր: Այսպիսով կ'ըլլայ երկրաղաքացի, թէ ֆրանսական եւ թէ հայկական: Ան միաժամանակ Հայաստանի դեսպանն է Զուիցերիոյ մէջ:

ՎԵՑ ԶԱՅԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ ԹՈՒՐԲԻՈՅ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՉ

Թուրքիոյ տարբեր շրջաններուն մէջ տեղի ունեցած տեղական կառավարման ընտրութեան ընթացքին չնախատեսուած յաջմանակներ տարած են վեց հայեր: Այս յաջողութիւնը մեծ ուրախութիւն պատճառած է հայ համայնքին:

Արդարեւ, տարբեր կուսակցութիւններու եւ համախմբուածներու ցանկերէն առաջադրուած թեկնածուներէն հետեւեալ հայերն ընտրուած են. Ռաֆֆի Հերմոն Արաքս (կղզիներու քաղաքապետական խորհուրդ), Վազգէն Պարըն (Շիշլիի քաղաքապետութենէն Պոլսոյ մայր քաղաքապետական խորհուրդ): Իսկ տարբեր քաղաքապետական խորհուրդներու անդամներ ընտրուեցան Պետրոս Աւետիսեան, Յարութիւն Հրկիւն եւ Երուանդ Խօզուզու:

Նշենք նաեւ որ Պոլսոյ եւ շրջակայքին մէջ ներկայիս կ'ապրին 60 հազար հայեր:


ԶԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ ԶԱԼԵՊԻ ԵՒ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԶԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՉ


Հայագիտական ուսումը նոր թափ կը ստանայ Սուրիոյ Հալէպ քաղաքի եւ Դամասկոսի պետական համալսարաններուն մէջ: Արդարեւ, այս ծրագիրը մշակուած էր անցեալ տարի, երբ Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Սպարտակ Մէտանեան Սուրիա այցելեց եւ այնհոգեհետեւ Հալէպի մէջ սկսած գործել Հայոց լեզուի ուսուցման կենտրոնը:

Ներկայիս կը ծրագրուի հայագիտական ամպիտոն մը բանալ Դամասկոսի պետական համալսարանին մէջ: Այս կապակցութեամբ Սուրիոյ մօտ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Արշակ Փոլատեան յայտնեց թէ Հայաստանի պետական երեք բարձրագոյն հիմնարկներ իրենց աջակցութիւնը պիտի բերեն ծրագրի իրականացման համար: Շուտով Դամասկոս կը ժամանեն Երեւանի պետական համալսարանի երկու այլ համալսարաններու տնօրէնները, այս խնդիրը մանրամասնօրէն քննարկելու համար:

«ԵՐԵՒԱՆՑԻ ԱՐՍԷՆ»Ը ԶԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ՄՈՍԿՈՒՅԻ ՄԷՉ

Մոսկուայէն ստացուած լուրերու համաձայն, Բող Մոսկովիչի մէջ ձեռքաւարտած է ծնունդով երեւանցի յայտնի ոճրագործ «Երեւանցի Արսէն»ը: Ան մերձ մոսկովեան քրէական աշխատակիցներու կողմէ կալանքի տակ առնուած է թմրեցուցիչներու ապօրէն շրջանառութեան մեղսակցութեամբ կասկածով: Անձնական գննութեան ընթացքին ձեռքաւարտուած անձէն գրաւուած է 10 կրամ հէրոյն:

 **ՆՈՐ ՍԵՐՈՒՆԳԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ**
ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ



ԿՈՄԻՏԱՍԻ ԾՆՆԴԵԱՆ 140-ԱՄԵԱԿԻՆ

Ժողովրդական Երգչուհի, Արուեստաբան,
ՓՐՈՖ. ՄԱՐԳԱՐԻՏ ԾԱՀԻՆԵԱՆ
 կը ներկայացնէ
ԿՈՄԻՏԱՍԻ ԿԵԱՆՔԸ, ՀԱՆԺԱՐԸ ԵՒ ԱԻԱՆԳԸ,
 երգային կատարումներով

Երեքշաբթի, Ապրիլ 21, 2009
 երեկոյեան ժամը 8:00-ին
 Կլէմէնտի կեդրոնական Գրադարանի սրահին մէջ
 222 E. Harvard St., Glendale

Մուտքը Ազատ Հիւրասիրութիւն

ԸՆԿԵՐԱՅԻՆ

ԱՐԱՐԱՏԻՆ ՎԱՅԵԼ «ԱՐԱՐԱՏ» (1) ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ «ԱՐԱՐԱՏ. ԶԱՅՈՑ ԱՆՄԱՂՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ» ԳՐՔԻ ԵՒ ՖԻԼՄԻ ԱՌԻԹՈՎ

«Բոլոր ազգերը թող հասնեն լուսին, Միայն թե Դայ Ազգը հասնի Մասիսին»:
Յ. ՇԻՐԱԶ

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ակադեմիայի պատմությունների անասնաբանության հիմնական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնեանի հեղինակային ջանքերով հայոց ինքնությունը, ինչպես նաև համայն մարդկության վերածննդի խորհրդանիշ երկրակամ Արարատ լեռը վերջերս վերամաստավորվելու վերաբերյալ «Արարատ. Հայոց անմահությունը խորհուրդը» պատմավեպագրական ֆիլմով (Երևան, 2008) եւ գիտահանրամատչելի աշխատությունները (Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2008, 96 էջ + 114 լուսանկար:

Տպագրվել է «Թէքէան կենտրոն» հիմնադրամի հովանավորությամբ):

Ա. Մելքոնեանը հեղինակ է հայոց պատմությանը, ժողովրդագրությանը, տեղագրությանը ու պատմա-աշխարհագրությանը նուիրված մեկ տասնհինգ աշխատությունների, որոնց գիտագործնական նշանակությունն առաւել է մեծանում, քանի որ ուղեկցում է անմիջականորէն պատմական հայրենիքի տարածքներն այցելելու եւ տեղում հետազոտելու հետ: Գիտական մեր ազգային պետական եւ հոգեւոր սիրուած ու յարգուած գործիչները հետ (Անդրանիկ Մարգարեան, Մեսրոպ Արք. Աշտեան եւ այլք) բազմիցս եղել է Արեւմտեան Հայաստանում (1997, 2000, 2001, 2006, 2007 թթ.) եւ իր մասնագիտական խոր իմացութեամբ ուսումնասիրել պատմական տարածքները, ապա, վերադառնալով, աշխատություններով ու տեսաֆիլմերով իր տպաւորությունները փոխանցել հայրենակիցներին՝ «հայրենաբաղձ նորանոր մարդկանց» մղելով «ղէպի գերուած Հայրենիքի ճամբաները» (էջ 4): Այդ ուղեւորութիւնների տրամաբանական շարունակութիւնը եւ թագն ու պակը դարձաւ 2007 թ. Օգոստոսի 10-ին Փհայ ժողովրդի համար բախտորոշ Սեւրի դաշնագրի օրը, Արարատ լեռան 5165 մ բարձրութեան դժուարահաս գագաթ ոտք դնելը՝ արդիւնքում սոցիալ գոյգ խորհրդանշական ստեղծագործութիւնների ծնունդը: Ֆիլմի հիմքում ընկած է հինգ բաժինների բաղադրուած յիշեալ համայնուն աշխատությունը, երկուսն էլ նուիրուած են հայ նոր գրականութեան հիմնադիր, մեծ լուսաւորիչ ինչպէս տուր Աբովեանի ծննդեան 200-

ամեակին (1809 թ.) եւ Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի հետ Խ. Աբովեանի Արարատի գագաթը բարձրանալու 180-ամեակին (1829 թ.) եւ բացուած են մենագրութեան ու սցենարի հեղինակ Աշոտ Մելքոնեանի իմաստալից խօսքերով. «Ամէն մի ժողովրդի կեանքում ազգային խորհրդանիշներն ունենում են իրենց ուրոյն տեղը, դերն ու նշանակութիւնը»:

Դրանք յաճախ խտացնում են տուեալ ազգի նկարագիրը, մարմնաւորում հայրենիքի կերպարը, իմաստաւորում նրա գոյակերպը:

Պատմական ճակատագրի բերումով Արարատ-Մասիսը ոչ միայն վեհութեան, անհասանելիութեան, կատարելութեան մարմնաւորում է, այլեւ 1915 թ. Հայոց մեծ եղեռնից ու հայ ժողովրդի հայրենագրկումից յետոյ բռնագաւթուած հայրենիքի եւ այն նորէն իր արդար գաւակներին վերադարձնելու համոզման անկրկնելի խորհրդանիշ, աշխարհասփիւռ հայութեան միասնականութեան փարոս» (էջ 8):

Աշխատութեան առաջին գլուխը հեղինակը վերնագրել է «Արարատ-Մասիսի վաղնջական պատմութիւնից (պատմաաշխարհագրական ակնարկ)», որտեղ Ա.

Մելքոնեանը հանրամատչելի կերպով լուսաբանել է Արարատ-Մասիս անուանումների ստուգաբանութիւնը նշելով. «Բառի հիմքում ընկած է Հայկական ողջ լեռնաշխարհում մշտապէս հանդիպող արիական մայր ժողովրդի ինքնանուանման արմատը, արը»:

Իզուր է, որ այդ բառարմատի մէջ գտնում ենք բացառապէս ազնուագարմ ու կենսատու բովանդակութիւն պարունակող իմաստներ: Նրանից է ծագում առաջին հերթին մեր երկրի Արմենիա, արի, ազնուագարմ ու քաջ մարդկանց երկրի անունը եւ նրա խորհրդանիշ Արարատի՝ արարչի կողմից արարուած լինելու գաղափարը: Մասիս տարբերակը ...հնդեւրոպական ծագում ունի. Մասիուս, որ նշանակում է բարձր, գերագոյն, վեհասքանչ, փառահեղ ու անհասանելի լեռ» (էջ 9, 10-11):

Ապա հեղինակը ներկայացրել է Նոյեան տապանի մասին աստուածաշնչեան պատմութիւնը, Արարատ լեռան հետ կապուած ժողովրդական առասպելները, ինչպէս նաեւ հանգամանորէն անդրադարձել է լեռան եւ յարակից տարածքների աշխարհագրական տեղագրութեանն ու բնակչիմացական մանրամասնե-

րին, կենդանական ու բուսական աշխարհին, բնակչութեանն ու պատմական յուշարձաններին, հայ եւ օտար պատմիչների վկայութիւններին եւ այլն (էջ 11-17):

Երկրորդ գլխում, «Աստուածը նորեալ լեռան անյաղթահարելիութեան խորհուրդը. Արարատը յաղթահարելու փորձեր (IV դար- XIX դարի առաջին քառորդ)», Ա. Մելքոնեանը պատմական ժամանակագրութեամբ ներկայացրել է հայ եւ օտար յիշատակողների (Ագաթանգեղոս, Փաւստոս Բիւզանդ եւ այլք) վկայութիւնները Արարատ լեռ բարձրանալ ցանկացած, ինչպէս նաեւ, մտադրուած եւ անյաջողութեան մատուած նախաձեռնողների շարքը, սկսած 4-րդ դարից:

Հեղինակը կարողացել է ի մի բերել եւ ներկայացնել տարբեր ժամանակներում, Արարատի մասին տարբեր անձանց թողած ուշադրել ու հետաքրքրական, տպաւորելի ու բնութագրական յիշատակութիւնները, որոնք հասկանալի են դարձնում սրբազան լեռան առեղծուածային, բայց եւ իրական էութիւնը: Ահա դրանցից մի քանիսը. «Արմենիայի, այդ երկու գագաթների վրայ գտնուած են Հայաստանի թագաւորների շիրիմները» իրենց գանձերով: Դրանք միտումնաւոր կախարհուած են, որպէսզի անկարելի լինի դրանց

վրայ բարձրանալը (13-րդ դարի սկիզբ, արաբ հեղինակ Շահաբադ-դին), «Հայաստանի կենտրոնական մասում վեր է խոյանում մի հսկայ, մեծ եւ բարձր լեռ, որի կատարին, ասում են, գտնուած է Նոյեան տապանը: Այդ լեռն ամբողջովին անցնելու (չըջանցելու - Ա. Մ.) համար երկու օրը բաւարար է: Լեռան գագաթին այնքան մշտական ձիւն կայ, որ ոչ ոք չի կարող բարձրանալ, որովհետեւ ձիւնը երբեք չի հալչուած, եւ յարատեւօրէն աւելանում է նոր տեղումներից» (1271 թ., Մարկո Պոլո), «...Ոչ ոք չի յաջողուել բարձրանալ այս լեռը... միայն այն պատճառով, որ բարձրեալն այդ չի կամենում»» (1318 թ., կաթողիկ հոգեւորական Օդորիկոս Պորդենտե) եւ այլն:

Երրորդ գլուխը վերնագրուած է «Նոյ նահապետից հագարամեակներ անց «Արարատի գագաթին. Ֆրիդրիխ Պարրոտ եւ իր խնամակցերը Աբովեան»: Հեղինակն այս բաժինն ամբողջութեամբ նուիրել է Դորպատի (այժմ Տարսուս, Էսթոնիա) համալսարանի պրոֆեսոր Փ. Պարրոտի եւ նրա արշաւախմբի ղէպի Արարատ բազմաթիւ փորձերից յետոյ կատարած պատմական առաջին յաղթական վերելքի (1829 թ., Սեպտեմբերի 27) նկարագրութեանն ու նորա-յայտ մանրամասնելին:

(Շարունակելի)

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻ ՃԱՆԱՊԱՐԻՄ

Շարունակուած էջ 5-էն

յում, Իսպանիայում, Սեւ ծովի ափերին, այլ Հայաստանի սահմանամերձ շրջաններում եւ գիւղերում: Ոստիկանները կը կալանաւորէին, իսկ դատաւորները կը դատէին ոչ թէ անմեղներին, այլ մեղաւորներին եւ բանտերը լցուած կը լինէին յանցագործներով, ոչ թէ իրաւունքի եւ օրինականութեան համար պայքարող քաղաքացիներով: Ոչ թէ կ'ունենայինք երկու թշնամական ճամբարների բաժանուած հասարակութիւն, այլ համերաշխ եւ միասնական հասարակութիւն, ինչպիսին էր 1988-1992 թուականներին: Սա Ազգային գաղափարի եւ Միասնական նպատակի բացակայութեան պատճառով կրած մեր կորուստների ամբողջական ցանկը է:

Միզուցէ, եթէ դա լինէր, այսօր եւ ժողովուրդը, եւ իշխանութիւնը կ'իմանային իրենց անելիքը Զաւախքում, Նախիջևանում... Հիմա, իրենց հարեւորութիւնը բազմապատկելու տենդով տառապողները կ'ասեն՝ «էս ո՞ր հասանք»: Եւ, իհարկէ՝ «ճիշդ են: Քանի դեռ կուռ, միասնական, ղէպի ապագան վատհօրէն քայլող Հայաստան չունենք, ոչ մի բանի չենք հասնի: Չենք ունենայ նաեւ Ազգային գաղափար եւ Միասնական նպատակ, որովհետեւ դա կը նշանակէր, որ այդուհետ Հայաստանում իշխանութիւնը չի ձեւաւորուելու կեղծիքի ու բռնութեան միջոցով: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը Հայաստանին տուել է մի ունիկալ շանս՝ դուրս գալ, յաղթահարելով սեփական համակարգային ճգնաժամը՝ նոր համակարգով, առողջացած հասարակական, սոցիալ-տնտեսական յարաբերութիւններով, իսպառ ազատութիւնը քոչարեանական ժառանգութիւնից:

Դրա համար պէտք է ունենալ խիզախութիւն, կամքի ուժ, արդարամտութիւն, հայրենասիրու-

թիւն եւ սրտացաւութիւն: Հայաստանում որեւէ հակաճգնաժամային ծրագիր երկրին եւ ժողովրդին անհրաժեշտ արդիւնք չի տա, եթէ նրա հիմքում դրուած լինի մոնետարիստական մոդելը: Այս ճգնաժամը, նախ եւ առաջ, լիբերալ համակարգի ճգնաժամն է, ուստի յաղթահարման համար պէտք է հրաժարուել այդ համակարգից: «Ազատ շուկան» բերեց ժողովրդի համատարած կեղեքմանը, մարդկային բանականութիւնից դուրս գտնուող գերբարձր գների հաստատմանը, մասսաների աղքատացմանը, իշխանութեան բարձր օղակներում գտնուող մի խումբ մարդկանց յանցածին գերհարստացմանը, «տէր եւ ծառայ» յարաբերութիւնների ստեղծմանը, «հարուստ եւ աղքատ»՝ ազգին քայքայող, թշնամացնող մթնոլորտի գոյութեանը: Ընթացող յաղթահարման ֆինանսական միջոցները գտնուած են երկրի ներսում, եւ հեռունեքում փնտտելու կարիք չկայ: Դրանք քոչարեանական կլանի ձեռքում են եւ խնդիրը ոչ թէ դրանց յայտնաբերման մէջ է, այլ ետբերման: Երկրի արդիւնաբերական ներուժի ամենապարզ գոյքագրումը ցոյց կը տալ, որ ձեռնարկութիւնների մեծագոյն մասը պարզապէս թաւանուել, անտեսուել են եւ խախտուել են սեփականաշնորհման պայմանները: Ուստի, դրանք ենթակայ են ազգայնացման, իսկ տէրերը պէտք է հատուցեն երկրին հասցրած վնասները:

«Այս ահաւոր աշխարհում, պետական կարգաւորումը եղել եւ մնում է մեր ժողովրդավարութեան, մեր աւանդոյթների, մեր քաղաքացիների իրաւունքների եւ ազատութիւնների ընդլայնման լաւագոյն միջոցը» - ասում է ԱՄՆ-ի պատմական մտքի խոշորագոյն ղէպբերից մէկը՝ Արթուր Շլիզենգերը: Առաւել հաւանական է, որ իշխանութիւնը կ'անտեսի ակնյայտը եւ կը մնայ 11-ամեայ ճահճի մէջ, բայց արդէն առանց իշխանութեան:

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ Palm Springs

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից Լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ մնջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քարուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

ՀԱՅ ԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

ՍԽԱԼ ԲԱՆ ՄՐ ԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Շարունակում է էջ 6-էն

Շարունակում է էջ 6-էն

ւէ համաձայնագրէ թուրքերոյ հետ:

Գ. Պետուժիւն - Սփիւռք

Եւ ահա հոս կը կայանայ շան գլուխը:

1970 ական եւ 80 ական թուականներու հայ ահաբեկչական շարժումներով դղրդացող եւ այնուհետեւ ցեղասպանութեան ճանաչումի պահանջքով խաղաղ միջոցներով ամէն կողմ քաղաքական լծակներ օգտագործող համասփիւռքեան Գաղութները - ի մասնաւոր չիւսիսային Ամերիկայի եւ Եւրոպայի մէջ, - դարձան ըլլալ թուրք պետութեան աչքին փուշը:

Բ. Պետուժիւն - Փոքրամասնութիւն

Գաղտնիք չէ թէ այսօրուայ թուրքիան, 1930-ական թուականներու փոքրամասնութեան կալուածի տուրքերու եւ չվճարողներու տարագրութեան կամ՝ 1955ի փոքրամասնութիւններու հալածումի եւ կալուածքներու հրկիզումի կամ տանամեակներ շարունակ Արեւելեան տարածքները արզիւնալ գոտի յայտարարող, կամ ցեղասպանութիւն եւ հայ բառն ու անունը թապու հռչակող երկիրը չէ:

Դժուար է պայքարիլ այս սփիւռքին դէմ: Իր գոնուած երկիրներու հպատակութիւնը վայելող, պայքարող հայ սփիւռքը թէեւ ծանօթ, բայց անհասցէ է թուրք պետութեան աչքին:

Այո բան չէ փոխուած ցեղասպանութեան ուրացման պետական քաղաքականութեան մէջ:

Սահմանադրականօրէն ապահովուած ազատութիւններու օրէնքներով զինուած, բայց եւ այնպէս միայն եւ միայն ճշմարտութեամբ գրահապատուած սփիւռքահայութիւնը չկրնար հարուածի դիւրին թիրախ ըլլալ թուրք պետութեան:

Այո պէտք էր չեղել Հրանդ Տինքի արիւնը, մասամբ ազատագրելու համար թուրք ընկերութիւնը ինքնին - (society):

Բայց եւ այնպէս յարաբերաբար աւելի ազատ արտայայտութեան միջոցն մը կայ որո՞ւ պատճառաւ է որ 43 ամեայ Սէրտար Քանեա մը դատ կը բանալ կրթական նախարարութեան դէմ, Սարի Կէլին - խարտեալ Հարսը - հակահայ ֆիլմի վարժարաններէ ներս ցրուելուն եւ ցուցադրելուն համար:

Ուստի ճշմարտութիւնը խեղաթիւրելու գլխաւոր միջոցը կը մնայ միլիտանտ տուլարներու միտումին մէջ որուն տարիներու վրայ կուտակուած ջանքերու արդիւնքը, հանրային կարծիքները փոխելու ուղղութեամբ յանգած է կատարեալ ձախողութեան:

Եւ ահա ճիշդ այդ միջոցն է որ կ'ակնարկէ Մուրատ Պարտաքճին եւ «Թալասթ Փաշաչի մնացեալ փաստաթուղթերը» հատորի հրատարակման առիթով կատարած հետեւեալ յայտարարութեան մէջ:

Հոս սակայն, թուրք պետութեան սուտի, կեղծիքի եւ ուրացման թումբի կիլոգրամն արգելք հանդիսացողը եւ արհեստական միջոցներով տակաւին կանգուն պահողը, արեւմտեան աշխարհի սիոնիստ եւ իսրայելամէտ լծակներն են: Անոնք թուրքերոյ մէջ գտած են քաղաքական եւ տնտեսական դաշնակից մը որո՞ւ ամօթը կը շարունակեն ծածկել թզենիի տերեւով մը փոխան իրենց Պաղեստինեան ճակատի վրայ կատարած ոճիրներու, ասպատակումներ եւ տարածքային ընդարձակման ծրագրիներու մէջ ապահոված գործնական աջակցութեան:

«Երբէք պիտի չկարենայի հրատարակել այս գիրքը տասը տարիներ առաջ: Անպայման դաւաճան պիտի յորտըջուէի: Մտայնութիւնը փոխուած է»:

Ոչ՝ միամիտ մանկամտութեան հարց չկայ, հաւատալու համար թէ պետական մտածելակերպը փոխուած է:

Մեծ եղեռնէն ի վեր Սփիւռք-թուրք պետութիւն յարաբերութիւնները շօշափելի բարելաւում վայելած չեն:

Երբէք: Բայց փոխուած է ժողովրդայինը, մասնայայնալ եւ այդ գարգացումի ընթացքն է, ինչպէս պիտի ըսէր նահատակ Հրանդ Տինքը, որ օր մը պիտի փոխէ նաեւ պետականը:

ԻՆՔՆԱՐԴԱՐԱՉՈՒՄԻ ԶԱԽՈՂ ՓՈՐՁ ՄՐ

ՈՉ ԵՒՍ Է ՍԱՐԳԻՍ ԶՈՒԼՅԵԱՆ

Շարունակում է էջ 5-էն

Շարունակում է էջ 15-էն

միջկուսակցական ժողովներուն ընթացքին, սակայն, յատակօրէն պահանջուեցաւ իմանալ գոյանալիք հայկական պլոքին քաղաքական ուղղութիւնը: Նոյնիսկ պլոքին կարգավիճակին մասին չտրուեցաւ համոզիչ պատասխան: Անոնց կողմէ առաջ քաշուեցաւ պլոքը կազմելու սկզբունքը, բայց երբ պահանջուեցաւ յստակացում պատասխանին մէջ գլացան: Մեկնելով հայկական երեսփոխանական պլոքի անցնող տասնամեակներու փորձառութեանէն, որ Հ.Յ.Դ.-ն պլոքը լծակի մը վերածած էր, պահանջուեցան լուսաբանութիւններ: Բնական էր, որ պիտի ուզէինք իմանալ, թէ ի՞նչ փոխուած էր անցեալէն: Որեւէ պարագայի, Մուսթաֆայալ հոսանքի հետ կապուածութիւնը չպատճառաբանուեցաւ: Մեր ներկայացուցիչները յայտնեցին թէ կարելի է քաղաքական թեքումով մշտնջող պլոքի մը մասին խօսիլ: Բայց միւս կողմէ շեշտուեցաւ որ հայկական

կուսակցութիւնն երբ ներազապին, համայնքային հարցերու մէջ մնան միասնական: Մենք առաջարկեցինք պլոքը կազմել խորհրդարանի ընտրութիւններէն ետք, Հ.Յ.Դ.-ն մերժեց առաջարկը: Հարց տրուեցաւ, թէ երբ չէզոքութիւն կ'առաջարկուի՝ ինչպէ՞ս մեկնաբանել այդ չէզոքութիւնը երբ Հ.Յ.Դ.-ն կը մնայ Մարտ 8-ի ուժերուն հետ:

Մենք առարկութիւն չունինք, թէ ընտրական, քաղաքական արեւելումով որո՞ւն հետ կը նախընտրէ գործակցիլ Հ.Յ.Դ.-ն, ոչ ալ պիտի փնտռենք այդ գործակցութեան պատճառները: Ընտրանքին մէջ ազատ է որեւէ հոսանք: Այդ մէկը վոլորին արդար իրաւունքն է, ինչպէս մեր պարագային, նոյնպէս ուրիշի մը: Բայց երբ լուսավանութիւններ կը տրուին, նախընտրելի պիտի ըլլար շփոթի չմատնել հանրային կարծիքը եւ հայութեան անունը դարձեալ չարաշահումի չեն թարկել:

«ԱՐԱՐԱՏ»

նախագահ Գաղիկ Մինասեան կը յայտարարէ «Ես նորից եկայ այն համոզման, որ առաջին նախագահի մօտ, սովորաբար, կանխատեսումները չեն իրականանում: Երբ յաջորդ օրը դրամը կտրուկ արժեզրկուեցաւ, Մինասեան հակադարձեց, «Բայց ես որեւէ սխալ բան չեմ ասել: Ճիշդ հակառակը՝ իմ կանխատեսումներն իրականացել են, քանի որ տուլարի փոխարժէքը 400-ից չի բարձրացել...»:

Սխալ բան մը կայ, երբ 2008 Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներուն վարչապետ Տիգրան Սարգսեան կը յայտարարէր թէ «Մենք ուրախութեամբ նշում ենք, որ հայկական դրամը վայելում է վատահումութիւն, մենք նաեւ կայուն արժոյթ ունենք», կեղրոնական դրամատան նախագահ Արթուր Զաւատեանը կը յայտարարէր թէ «Հայաստանն այսօր խաղաղ նաւահանգիստ է ներդրումների համար» եւ խորհուրդ կու տար բոլոր ներդրումները իրականացնել դրամով «գոնէ մեր հայրենակիցները ՊԱՐՏԱՒՈՐ (ընդգծումը մերգմէ՛ ՅՏԴ) են դա անել»:

Այս յայտարարութիւններէն 3 ամիսներ ետք, դրամը կ'արժեզրկուէր 25%-ով, ահաւոր փնասի մատնելով իրենց հաւատք ընծայող հայրենակիցները: Սխալ բան մը կայ, երբ ԳՐՈՂ-ՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ (ընդգծումը մեզմէ, ՅՏԴ) նախագահ Լեւոն Անանեան կը յայտարարէր, որ եթէ Հայաստան գրկուի Եւրախորհուրդի ձայնի իրաւունքէ, «ապա ոչինչ չի փոխուի Հայաստանի համար, արեւն էլի արեւելքից կը ծագի»:

Սխալ բան մը կայ, երբ Գիւմրիի մէջ ոստիկանապետ կը նշանակուի Շիրակ Շահնազարեանի նման անձ մը, որ երկու անգամ տարբեր պատճառներով հեռացուած էր ոստիկանական համակարգէն եւ նոյնիսկ բրէական գործ յարուցուած էր իր դէմ:

Սխալ բան մը կայ, երբ Մարտ 1, 2008ի սպանդէն օրեր անց, գլխաւոր դատախազի մամուլի քարտուղար Սոնա Տուրգեան կը յայտարարէր որ «իրավապահ մարմինների կողմից ցուցարարների ուղղութեամբ

որեւէ կրակոց չի արձակուել անգամ զանգուածային անկարգութիւնների ժամանակ»: Ոստիկանապետի մամուլի քարտուղար Սայաթ Շիրինեան կը յայտարարէր «պաշտօնապէս յայտնում եմ, որ ոստիկանութեան ծառայողների եւ ոստիկանութեան զօրքերի կողմից գէնք չի կիրարուել» իսկ ոստիկանութեան զօրքերու շտաբի պետ Գեղամ Պետրոսեան կը յայտարարէր «Ամէն պատասխանատուութեամբ յայտնում եմ, որ ոստիկանութեան զօրքերի ծառայողների եւ զինծառայողների մօտ այդ օրը մարտական գէնք չի եղել...»:

Սխալ բան մը կայ, երբ Մարտ 1, 2008ի սպանդը ուսումնասիրող Ազգային ժողովի յանձնաժողովը, մօտ տարի մը ետք չէ կրցաւ լուծել թէ ովքե՞ր օգտագործեցին Չերի-մուխա արցունքաբեր ուժերը, մինչ «Հայկական ժամանակ» թերթը հրատարակած է անունները եւ պաշտօնները այն 4 ոստիկաններուն, որոնք այդ ուժերը կրակած էին...:

Սխալ բան մը կայ, երբ Մարտ 4, 2008ին Գլխաւոր Դատախազ Ադուան Յովսէփեան, Ազգային ժողովի 4 պատգամաւորներու կալանքը իրականացնելու համար, կը յայտարարէր թէ բաւարար ապացոյցներ կան այդ 4ին մեղադրանքներ առաջարկելու, բայց տարի մը անց, այդ ապացոյցները չեն տրուած տակաւին...:

Իսկ երբ Ազգային ժողովին մէջ առաջարկ կ'ըլլայ անոնց կալանաւորումը չեղեալ համարելու, պատասխանը կ'ըլլայ, թէ պէտք է սպասել դատարանի վճիռին...:

Սխալ բան մը կայ, երբ Հայաստանի դատարաններուն մէջ մարդիկ կը «կորանցնեն» իրենց դատը բայց նոյնը կը շահին Եւրոդատարանին մէջ...:

Սխալ բան մը կայ, երբ մեր «սեպհական աղբը տունէն դուրս, օտարին չի հանելու» մասին խրատականներ կը հնչեցուին, բայց չեն պատասխաներ ինչո՞ւ տան մէջ աղբ պէտք է ըլլայ հարցին եւ կամ ինչո՞ւ մեր աղբը մենք մեր ձեռքով պիտի չկարենանք մաքրելու հարցին...:

Մինչեւ ե՞րբ պիտի շարունակուին «դաշունահարումները»...

որբանոցներու եւ դպրոցներու: Եւ այս բոլորին իրականացումը՝ շնորհիւ իր մնացուն ու յարատեւ խանութակութեան, ծառայասիրութեան անկոտրում ոգիին եւ անխնայ աշխատասիրութեան: Նիւթական օժանդակութիւն ժողովելու համար եթէ պէտք էր՝ որթատուներէ տերեւներէ փաթեթուած խճողակներ (սարմա) պատրաստել եւ գինք օգնող հայ տիկիներու խումբին հետ Թրանսալի գանազան բացօթեայ շուկաները տանիլ ու ծախել, առանց զլանալու, ամէն Շաբաթ կ'ընէր, կամ չէր խորշեր թակելու քաղաքական գործիչներու, երեսփոխաններու եւ նոյնիսկ նախարարներու դռները՝ տարահամոզելու գիրքեր հասնելու համար Հայաստանի ծով կարիքներուն:

Հայրենակցական Միութեան Քալիֆորնիայի վարչութեան, միւսը Տիար վազգէն Քալիֆաքճեանի անունով:

Տեղույն սովորութեան համաձայն ու գերեզման մեկնելէ առաջ, պակիր ամբողջ ժողովուրդը եկեղեցոյ կեդրոնական մասէն, երկար շարքերով, դազադին մօտեցաւ եւ խորագած զլուխ խոնարհելով դուրս մեկնեցաւ՝ ուղեկցելու հանգրուանը դէպի իր վերջին հանգրուանը:

Թէ ինչքան ընդունուած եւ սիրուած անձ մը եղած էր ողբ. Սարգիս Զուլֆեան Շաս Սիւր Բօն քաղաքի եւ շրջակայից մէջ, այս մասին պերճախօս կերպով կը վկայէր ժողովուրդին այն հոծ ներկայութիւնը, որ անոր մահը կը սպրթէ եկեղեցոյ եւ թէ գերեզմանատան մէջ, մինչեւ դազադին վրայ ափ մը հող լեցնելով հանգրուանին վերջին հրաժեշտ տալու պահը:

«Հող էիլ եւ հող դարձիր» քեզի համար ըսուած չէ, սիրելի Սարգիս, հերոսածին Հաճընի անդին գաւակ, յիշատակդ անուշ, նամանաւանդ գործք բարի պիտի շարունակուի ու յարաւետէ դեռ երկար ժամանակ մեր ու գալիք սերունդներուն մէջ:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Արմէն Սրկ.

ՀԱՅ-ԹՈՒՐՔ ՓՈԽ-ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարունակում է 2-ին

Շապուղյանին, եւ սրահը լեցնող կուսակցական դեկավարներու, շարքային ընկերներու, հայ մամուլի եւ մտաւորականներու, ինչպէս նաեւ օրուան նիւթով հետաքրքրուող հոծ ներկաներու:

Ձեռնարկի համադրողն էր ընկ. Տօքթ. Յարութիւն Սաղրեան, որ ներկաները մէկ վայրկեան յոտընկայս յարգելու կոչ ըրաւ Ատանայի Չարդի 100-ամեակի եւ Յեղասպանութեան 94-ամեակի գոհ գացած հայորդիներու: Ապա, բեմ հրաւիրեց օրուայ 3 գեկուցողները, որոնք գաղութին ծանօթ եւ օրուայ նիւթին մասնագէտ անձնավորութիւն-



Ձեռնարկի համադրողը Տօքթ. Յարութիւն Սաղրեան

ները կը հանդիսանային.

Յարութ Սասունեան, խմբագիր եւ քաղաքական տեսաբան Ջաւէն Խանճեան, մտաւորական եւ Արեւմտեան Հայաստանի վերաբերեալ գրքի հեղինակ:

Տօքթ. Համբիկ Սարաֆեան, կուսակցական գործիչ եւ հասարակական գործիչ:

Յայտագիրը այնպէս դասավորուած էր որ գեկուցողները իւրաքանչիւրը քանի մը վայրկեաններ նիւթին վերաբերեալ ելոյթներ ունեցան, շեշտը դնելով հայ-թուրք յարաբերութեանց տարբեր երեսներուն - Յեղասպանութեան ճանաչում, Օսմանեան կառավարութեան վարմունք, Թուրքիոյ մէջ ապրող փոքրամասնութեանց, յատկապէս հայ ժողովրդի նկատմամբ, հայ-թուրք յարաբերութիւնները պատմութեան ընթացքին, ինչպէս նաեւ Հայաստան-Սփիւռք կապերու ընդհանուր բնոյթին եւ նման հարցերու մասին:

Իւրաքանչիւր գեկուցողին ելոյթը ջերմ վերաբերմունքի արժանացաւ ներկաներու կողմէ, որոնք ծափահարութիւններով դիմաւորեցին այդ տեսակէտները:

Յայտագրի երկրորդ բաժինը կը կազմէր հարցումներ, պատրաստուած համադրող Տօքթ. Յ. Սաղրեանի կողմէ, որոնց հերթով պատասխանեցին յարգելի գեկուցողները: Յայտագրի նման դասավորուած լաւ ընդունելութեան արժանացաւ ներկաներու կողմէ, որոնք նաեւ առիթը ունեցան հարցումներ հարցնելու գեկուցողներուն, բաւական աշխտօք եւ երբեմն ալ որոշ հարցերու շուրջ քննադատական մտտեցումներով:

Այսպէս, հարցումները ունէին հետեւեալ բովանդակութիւնը.

- Հայերը եւ թուրքերը ինչպէս կը բացատրեն պատմութիւնը, յատկապէս ճեղատարածութեան վերաբերեալ:

- Ինչո՞ւ եւ ու՞րքեր դեր ունեցան ճեղատարածութեան ծրագրումին եւ գործադրութեան մէջ:

Այս երկու հարցումներու վե-

րաբերեալ ընդհանրապէս շեշտը դրուեցաւ Օսմանեան եւ Երիտ-թուրք կառավարութեան փանթուր-քիզմի վերաբերեալ քաղաքականութեան, Երիտ-թուրքերու եւ սիրոնիզմի գործակցութեան, եւ այսօրուայ թուրք կառավարութեան ուրացման քաղաքականութեան մասին:

- Քաղաքական ի՞նչ հիման վրայ պէտք է տեղի ունենան հայ-թուրք փոխ-յարաբերութիւնները: Հարցումը մասնավորաբար կը վերաբերէր Օգոստոս 10, 1920ին ստորագրուած, Սեւրի դաշնագրի մասին, որուն հիման վրայ տեղի ունեցած էր Ամերիկայի նախագահ Ուուրօ Ուելլսընի միջամտութիւնը, անկախ Հայաստանի քարտէսի բանաձեւման վերաբերեալ: Ի՞նչ կը վերաբերի այս դաշնագրին, շեշտը դրուեցաւ այն իրողութեան վրայ որ իբրեւ դաշնագիր, ան չէր վաւերացնում դաշնագիրը ստորագրող պետութեանց կողմէ, որպէսզի պարտադիր դառնար: Ամէն պարագայի, Հայաստանի ներկայ կառավարութիւնը, իբրեւ պետութիւն, իրաւունք ունի ոգեկոչելու այդ դաշնագիրը, եւ հայ ժողովրդի անունով, հողային պահանջ եւ հատուցում ներկայացնելու:

- Սփիւռք-Հայաստան փոխ-յարաբերութեանց հարցը բաւականին երկար քննարկման ենթարկուեցաւ: Ընդհանրապէս այն կարծիքը յայտնուեցաւ որ Սփիւռքի հայութեան եւ Հայաստանի կառավարութեան միջեւ հարկ եղած խորհրդակցութիւնները գոհացուցիչ չափով չեն կատարուած, եւ Հայաստանի Թուրքիոյ հետ իր կապերը կը հետապնդէ առ հասարակ իր մտահոգութիւններէն մեկնելով, որոնք անպայման ալ ամբողջական չեն նկատուիր ամբողջ հայութեան կողմէ: Անհրաժեշտութիւն կայ այս հարցի նկատմամբ, աւելի լուրջ քննարկան արժանացնել Սփիւռք-Հայաստան խորհրդակցութիւնները:

- Հայկական դատի եւ պահանջատիրութեան թղթածրարի վերաբերեալ, շեշտը դրուեցաւ արդէն իսկ բանաձեւուած երեք սկզբունքներու վրայ:

- Յեղասպանութեան ճանաչում
- Բռնագրաւուած հողերու վերադարձ
- Նիւթական հատուցում

Ի՞նչ կը վերաբերի Յեղասպանութեան ճանաչման հարցին, օրինակ Օպամայի ընտրական շրջանի արտասայտուութեանց, յայտնուեցաւ որ այս ճանաչումը բազմաթիւ երկիրներու կողմէ տեղի ունեցած է, նոյնինքն Ամերիկայի նախկին նախագահ Ռեյչինի կողմէ, եւ ուժերու վատնում է ճանաչուածը անգամ մը եւս ճանչնալու աշխատանքը: Անհրաժեշտ է առաջ անցնիլ եւ հետապնդել ճանաչումին ծնած, եւ անոր մաս կազմող երկու հարցերը: Այս ուղղութեամբ անհրաժեշտութիւն է ստեղծել հայ ժողովրդի անունով իօսող, միասնականութեամբ ստեղծուած մարմին մը, որ հետապնդէ հայ ժողովրդի իրաւունքները, իրաւական հիմքերու վրայ դրուած, եւ մասնագիտական ձեւերով, որոնք գոյութիւն ունին: Այս առիթը շեշտը դրուեցաւ այն իրողութեան վրայ որ մօտ ատենէն պիտի նշուի Յեղասպանութեան դարադարձը 1915-2015: Հարցումներ եղան թէ ի՞նչ ըրած ենք մինչեւ այսօր եւ ի՞նչ պարտինք ընել յետապէս: Հոս եւս առաջարկ եղաւ ստեղծել հայութեան «քոնկրետ» մը,



Ձեռնարկի ճեղքայի համադրողները

օժտուած իրաւաքաղաքական կարգավիճակով, որ Հայաստանի հետ աշխատանքները միատեղ ծրագրելով, փորձել ձեռք ձգել հայութեան իրաւունքները:

- Հայկական Յեղասպանութեան ճանաչման հետապնդումը կրնայ Թուրքիան մղել գիշումներ կատարելու Հայաստանին-սահմաններու բացում կամ դիւանագիտական կապերու հաստատում, եւ այլն: Սակայն Թուրքիան այս քայլերը կրնայ առնել պարզապէս համաշխարհային կարծիքին ցոյց տալու որ ինք համաձայն է հայութեան առնչուող հարցերուն գոհացուցիչ լուծումներ փնտթելու: Սակայն կարծիքներ յայտնուեցան որ Թուրքիա երբեք չընդունիր իր շահերու ոտնահարումը: Ընդհանրապէս իր քայլերով առաւել եւս կը փորձէ հայ ժողովրդի արդար

շահերու ձեռք բերումը արգիլելու:

- Վերջապէս այն կարծիքը յայտնուեցաւ որ հայ-թուրքական յարաբերութիւններու կարգաւորումը սոսկ պետութիւններու մակարդակով հնարաւոր չէ: Անհրաժեշտ է հասարակութիւնները - հայ եւ թուրք ժողովուրդները իրարու հանդէպ մշակեն բարեկամական յարաբերութիւններ, ինչպէս ներողութիւն խնդրելու պարագան հայ փոքրամասնութեանց նկատմամբ Թուրք կառավարութեան վերաբերմունքի փոփոխութիւն, իրաւունքներու մարդկային եւ այլ յարգում:

Ձեռնարկի աւարտին տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն, որու ընթացքին շարունակուեցան նիւթի վերաբերեալ մտերիմ խօսակցութիւնները:

Յ.Ս.

ՀԱՅ-ԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԸՍՈՒԱԾՐ ԱԻՆԼԻ ԱՌՁԵ՞Ր

Շարունակում է 2-ին

նութիւն, ապա ինչի հաշուին է ձեռք բերուել դա:

Սակայն կայ նաեւ այդ ամենի դիտարկման մէկ այլ տեսանկիւն, որը նոյնպէս պէտք չէ հաշուից դուրս թողնել: Ի վերջոյ, գուցէ ոչ մի գաղտնիութիւն էլ չկայ, կամ կայ, բայց գաղտնի է պահուած ոչ թէ օրակարգը, այլ օրակարգի բացակայութիւնը: Այսինքն, իրականում հայ-թուրքական հանդիպումներն ընդամենը պարզ ձեւականութիւն են: Համաշխարհային դիւանագիտութեան մէջ դա նոյնպէս կիրառման տարբերակ է: Այսինքն, եթէ ձեւականութիւն կայ, ուրեմն դա ինչ որ մէկին պէտք է: Իսկ հայ-թուրքական ձեւականութիւնը կարծես թէ օգտակար է բոլորին: Թուրքիան այդպիսով ցոյց է տալիս, որ զբաղուած է փոխուելու շատ լուրջ գործընթացով, որ պատրաստ է վերանայել հայերի հետ իր բարդ յարաբերութիւնը, Հայաստանն այդպիսով փորձում է իր հասարակութեան ուղադրութիւնը ներքին ինդիւրներին, յատկապէս քաղաքապետի ընտրութեան ժամանակաշրջանում շեղել դէպի հայ-թուրքական սահմանի բացում, որն այստեղ ներկայացուած է որպէս փրկութիւն: Գերտէքութիւնների համար հայ-թուրքական ձեւականութիւնը համաշխարհային տնտեսական ձգնաժամի դէմ արդէն ձանձրալի եւ միապաղաղ դարձող

պայքարից մի փոքր շեղուելու հնարաւորութիւն է, Ադրբեջանի համար հայ-թուրքական ձեւականութիւնը նոյնպէս նպաստաւոր է, քանի որ Ալիեւը իր ժողովրդին ցոյց կը տայ, թէ ինչպէս է սանք ոչ թէ Ադրբեջանի, այլ փաստացի Թուրքիայի հաշուին փորձում լուծել Ղարաբաղի հարցը:

Պարզապէս այդ ամէնում կայ մի մեծ վտանգ: Բանն այն է, որ այդ պրոցեսում, կողմերից որեւէ մէկը, յատկապէս այն կողմը, որ բաւական անփորձ է այդ կարգի դիւանագիտական տեղապտոյտներում, յանկարծ ու ազարտի մէջ ընկնի, ու կոնկրետ ինչ որ քայլ անի, բոլորին դնելով փաստի առաջ: Այդ առումով ազարտի հաւանականութիւնը մեծ է Հայաստանի համար: Բանն այն է, որ այդքան էլ մեծ չէ մեր երկրի փորձառութիւնը համաշխարհային դիւանագիտութեան հարցում: Այնպէս որ, ոգեւորուած լինելով այդ դիւանագիտութեան մէջ կոնկրետ մասնակցութեան փաստից, Հայաստանը կարող է ազարտի մէջ ընկնել ու վերցնել եւ կոնկրետ քայլ անել, սանք Ղարաբաղի հարցում գիշման տեսքով, մտածելով, որ դա այն կարեւոր լուծման է, որ կարող է ներդնել համաշխարհային դիւանագիտութեան սեղանին: Ահա սա է թերեւս այդ ամենի ամենամեծ վտանգը մեզ համար:

ՅԱԿՈՒ ԲԱՂԱԼԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂՁԱՆՔ
«Մասիս»ի աշխատակիցներէն Տիկ. Անդինէ Քէչիշեան-Մուրատեան, շրջանէ մը ի վեր հիւանդացած ըլլալով՝ ներկայիս կը բոլորէ իր ապաքինման շրջանը: Արագ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք անոր:

ՍՐԲԱԶԱՆ ՅՕՐ ՍՈՒՐԲ ԶԱՏԿՈՒՄՆ ԲԱՐՈՁ

Մարումակումած էջ 7-էն

Յարուցեալ Քրիստոսի հրաշքը թող սթափեցնէ նաեւ մեզ, որպէսզի նոր մարդն զգենունք եւ քայլենք Աստուծոյ գծած ճանապարհով, որուն ամբողջ ընթացքին յանձնառու ըլլալով Անոր պիտի դառնանք ստեղծագործակից Աստուծոյ եւ Անոր բարի ձեռքերը՝ մեր զաւակները դաստիարակելու համար սրբութեան խորհուրդով:

Թող Յարութեան շունչով ունենանք տեսլականը հզօր Եկեղեցի դառնալու Աստուծոյ խօսքին քարոզչութեամբ, մեր Թեմը իր եկեղեցիներով դարձնելով բարեկարգ առաքելութիւն եւ իր հովիւներով ու ծառայողներով հոգիներու ճարտարապետ: Այսպէս հաւատացին մեր նախնիք եւ մեզի հաղորդեցին հաւատամբը այն գերագոյն ճշմարտութեան, որ «Եկեղեցին հայկական ծննդավայրն է իմ հոգևոյն»:

Հաւատալ Քրիստոսի Յարութեան կը նշանակէ Անոր մէջ տեսնել աստուածակերտ Եկեղեցին, որուն ապրող ու շնչող մասնիկները դառնալու պատիւին հրաւերը մեր սրտերուն մէջ ծրարած ոտքի պիտի կանգնինք նոր կեանք մը սկսելու, որուն մեկնակէտը պիտի ըլլայ Աստուած, ու հորիզոնէն անդին մեզի սպասուած կեանքը:

«Քրիստոս Յարեալ ի մեռելոց թիւի մէջ մարտի 11-ին Քրիստոսի»:

«Քրիստոս Յարեալ ի մեռելոց թիւի մէջ մարտի 11-ին Քրիստոսի»:

Յովնան Արք. Տէրտէրեան Առաջնորդ

ԱՅՆԹԱՊԻ ՅԵՐՈՍԱՍԱՐՏԻ ՏԱՐԵԴԱՐՁ

Մարումակումած էջ 8-էն

կան եւ կը թական աշխատանքները: Անոնք բացած են աղջկանց վարժարաններ եւ գոլֆֆէլդեր, որոնցմէ, Ալեքսէո Գոլֆֆէլդը մինչեւ օրս կը գործէ Հիւսիսային Սուրբ Միքայիլի մէջ: Ան խորը յուզականութեամբ արտասանեց այն թեմայի հերոսներու նուիրած իր ստեղծագործութիւններէն մին:

Տիկ. Թադուսի Արզումանեանի մեր վաւերական բանաստեղծներու երկնումներէն հատուածներու մէջ բերումներով համեմուտ ազատանքի արժանի գեկուցումէն ետք, հանդիսութեան խորքին պատշաճ գոյգ մը ելոյթներով հանդէս եկաւ միջազգային երգարուեստի երկնակամարի վրայ տակաւ բարձրացող հայագոյի աստղերէն **Տիկ. Անահիտ Ներսիսեան**, որ արձանագրեց կատարողական բարձր մակարդակ, արժանանալով ներկաներու բռուն ծափահարութիւններուն:

Գիտահետազոտական պատրաստութեամբ, դիւրահաղորդութեամբ եւ հաճելի ներկայացումով մը՝ օրուան գլխաւոր բանախօսուհի **Տիկ. Ալիծ ձէպէճեան** - Աղպապեանի գեկուցումը արձանագրեց չափանիշ: Որքան պիտի ուզէինք, որ յարգելի բանախօսուհին, իր ելոյթը շրատարակութեան տալով Այնթապը իր չորս տարածքներով - բարբեր, աւանդութիւններ, կըթամշակութային կեանք եւ հայագահայանման մասնաշաղկապ ռազմավարութիւններ յայտնաբերէր հայ ընդհանրութեան, առ ի գիտութիւն: Ան անդրադարձաւ Այնթապցիի փոխա-

դարձուած կամիժներուն (դիմացինը բարկացնելու ունակութիւն) բնորոշ գիծերուն: Կատակասիրութեան բնասուր սովորութիւն, «Այնթապի մէջ խնթ փնտռելու կարիք չկար, հոն բոլորը խնթ են»: Թըքախօս հայ մանուկներուն հայերէն սորվեցնելու ձեւերու մէջ կը գտնուի թուրքերէնին շաղկապուող հայերէն նշանակութիւնը, օրինակ. պալթա՝ կացին, թախտա՝ տախտակ, սիլլա՝ ապրտակ, ու այսպէս, հայ մանուկը երգելով կը սորվէր հայերէն բառեր եւ լեզուն:

Տիկ. Ալիծ ձէպէճեան - Աղպապեան կը նկարագրէ իր ծնողներէն իմացած կամ ուրիշներէն յոթագրած ու թարգմանած՝ Այնթապի ազգագրական եւ կրօնական երգերու օրինակներ, որոնք կը վերաբերէին Քրիստոսի Սրբ. Մանդեան, հաղորդուող «Աւետիս» ին, «Բարեկենդանին», Մեծ Պահոց ծոմին, «Վարդավառ»ին, եւ այլն: **Տիկ. Ալիծ** միաժամանակ դաչուն ձայնով կ'երգէր այդ երգերը:

Տիկ. Ալիծ ձէպէճեան - Աղպապեանի մանրամասնեալ այլ շահեկան գեկուցումը իր աւարտին կը յանգի հետեւեալ մտածումով. «Այնթապի հերոսամարտը ինծի համար կը բնութագրուի հայ ժողովուրդի 500 տարուայ պայքարով, որուն ձգտումը եղած է միշտ պայքարիլ յանուն մեր մարդկային իրաւունքներու պաշտպանութեան, մեր ազգային ինքնութիւնը կարենալ պահելու համար: **Հ.Ա.Մ.Մ. ի Նախագահի** հանգամանքով, հանրածանօթ մանկավարժ Երուանդ Պապայեան, իրեն

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԶԱՏԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՍԸ

Մարումակումած էջ 7-էն

ինքնութիւնը՝ բայց կատարելագործուած, եւ պիտի գտնուինք անսահման տիեզերքի մը մէջ ուր պիտի ճանչնանք զԱստուած դէմ առ դէմ, առանց միջնորդի կամ մեկնաբանի:

Կարելի է Քրիստոսի յարութիւնը եւ մեր յարութիւնը բաժնել իրարմէ: Քրիստոս ինքնիրեն համար չչաղթեց մահուան, այլ մեզ ազատելու համար մահուան ճիրաններէն: Սուրբ Պողոս վճռական է. եթէ Քրիստոս յարութիւն չառնէր, մեր ամբողջ հաւատքը պիտի խախտէր եւ ոչինչի վերածուէր: Եւ մեր երկրաւոր կեանքը պիտի դառնար

նար անիմաստ ու աննպատակ գոյութիւն մը:

Քրիստոսի յարութիւնը ոչ առասպել է ոչ ցնորք. անհերքելի իրողութիւն է, կնքուած բիւրաւոր վկաներու արկունով եւ դարձած, դարերու ընթացքին, հիմը մեր յոյսին՝ թէ մեր յարութեամբ, պիտի բաժնենք Քրիստոսի փառքն ու երջանկութիւնը:

Մահուան հեռանկարը մեզ սարսափի չի մատնել, որովհետեւ կը հաւատանք որ ան կոյր ոստում մը չէ քառսի, մէջ, այլ հրաւեր մը՝ լիովին վայելելու մեր այլակերպուած մարդկութիւնը յարուցեալ Քրիստոսի հետ:

Մանուէլ Եսայ. Պաթագեան

«ՄԵՐՏԻՆԵԱՆ» ՎԱՐժԱՐԱՆ

Մարումակումած էջ 8-էն

ները՝ հայեցի դաստիարակութիւն, քրիստոնէական կրթութիւն եւ ուսումնական բարձր մակարդակ: Ան հպարտութեամբ լի էր այլ դպրոցներ չաճախող մեր շրջանաւարտներուն կրթական չափորոշիչները: **Ձեռնարկին** վերջին մասը հրճուանքով եւ յուզումով լեցուց ներկաները: Մերտինեան «ի առօրեային մէջ յաճախ կը լիջուի Աստուածաշունչի» «Ամէն բանի համար ժամանակ մը կայ» խօսքը. ձեռնարկի այս պահը ժամանակն էր դնահատանքի: Այս տարի արժանաւորապէս գնահատուեցան վարժարանի անձնակազմին երկու նուիրեալներ: Տնօրէնը գմտնք ներկայացուց, ապա բեմ հրաւիրեց հոգաբարձութեան ատենապետը:

Առաջին մեծարեալն էր Սիւզի Աբաջեան-Պարտագճեան, որ 1983-ին սկսեալ, մէկ տարի ընդմիջումով, պաշտօնավարած է վարժարանի նախամանկապարտէզի բաժնիին մէջ: Ան բարձր կը գնահատէ հայ աւետարանական կրթութիւնն ու

դաստիարակութիւնը եւ այդ պատճառով ալ ոչ միայն ինք քառորդ դարէ ի վեր կը ծառայէ այս հաստատութեան մէջ, այլ իր երկու զաւակները շրջանաւարտ եղած են այս դպրոցէն: Երկրորդ մեծարեալն էր Մարալ Պէհէնիւհան-Մարտիկեան, որ անցնող 25 տարիներուն անխոնջ կերպով ծառայած է «Մերտինեան»էն ներս, նախ իբրեւ քարտուղարուհի, ապա՝ իբրեւ գրասենեակի վարիչ: **Տիկ. Մարալը** դարձած է դպրոցին ողնասիւնը, ապրած է «Մերտինեան»ի տաք ու պաղ օրերը, գործած է 5 տնօրէններու եւ բոլոր հոգաբարձական կազմերու կողքին, նոյն բծախնդրութեամբ եւ հաւատարմութեամբ, շեշտեց **Ինճէճիքեան**: Անոր 2 զաւակները եւս «Մերտինեան»ի շրջանաւարտներ են: Տնօրէնն ու Հոգաբարձութեան ատենապետը անոնց յանձնեցին մէկական յուշատախտակ եւ ոսկեայ սպարանջան:

Ձեռնարկը վերջ գտաւ վեր. Պարգեւ Տարագճեանի օրհնութեան աղօթքով:

յատուկ պերճախօսութեամբ, իր գնահատանքը յայտնեց ներկայ այնթապցի ու հիւր ներկաներուն, որոնք եկած էին իրենց յարգանքի տուրքը վճարելու Այնթապի հերոսամարտի զոհերուն: Նմանապէս, Շերմօրէն իր շնորհակալութեան խօսքը ուղղեց վեր. Պարգեւ Տարագճեանին, համապարտութեան Ատենապետ Պրն. Աւետիս Տէմիրճեանին, հանդիսավարուհի **Տիկ. Թադուսի Արզումանեանին**, օրուան բանախօս **Տիկ. Ալիծ ձէպէճեան** - Աղպապեանին, երգչուհի **Անահիտ Ներսիսեանին**, Դաշնակարուհի **Տիկ. Ապաճեանին** եւ բոլոր անոնց, որոնք իրենց մասնակցութիւնը բերած էին ներկայ հանդիսութեան պատրաստութեան: Պր. Պապայեան, ապա զարգացուց այն ինդերանք-առաջարկութիւնը, թէ յառաջիկայ տարի, իսթորուան հանդիսութեան ներկայ իւրաքանչիւր այնթապցի, գալիք 90րդ տարեդարձին պարտի բերելը երկու այնթապցի, ինք ըլլայ կամ ոչ:

Հայ Այնթապցիներու Մշակութային Միութեան ներկայ յաջող ձեռնարկը իր աւարտին յանգեցաւ այնթապցիներու օրհներթով, որուն իրենց մասնակցութիւնը բերին ներկաները, անխտիր:

GENERAL CONTRACTOR BID REQUEST

Qualified “B” licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E09-05, Module 11.4 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, May 12, 2009.

The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for eight (8) single family homes, two duplexes (4), two triplexes (6) one quadplex (4) and one five unit Apartment (5), for a grand total of twenty-seven (27) units. Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive.

Two Pre-bid conferences have been scheduled for April 23, 2009 and April 30, 2009, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California. Attendance at one or the other conference is Mandatory.

INVITATION FOR BIDS (IFB) No. 7783 WELDING SERVICES AT VARIOUS HOUSING DEVELOPMENTS

The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for Welding Services at Various Housing Developments. Copies of the IFB may be obtained, at no charge, at the Authority’s General Services Department, 2600 Wilshire Boulevard, Suite 3100, Los Angeles, CA 90057 or by calling 213-252-1832. Copies of the IFB may also be downloaded from the internet at www.HACLA.org/constgs Bids will be accepted at the same location until 2:00 p.m. (local time), April 24, 2009.

4/2, 4/9/09
CNS-1553208#
MASSIS WEEKLY


REQUEST FOR PROPOSALS (RFP# 7517) PROGRAM/PROJECT MANAGEMENT SERVICES

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified, experienced Program/Project Management firms to provide Program/Project Management services to the Authority for the planning, administration and development of its capital asset projects involved in Federal stimulus funding and other capital projects including redevelopment and new development. Copies of the RFP may be obtained beginning April 1, 2009 online at www.hacla.org/ps, or by calling (213) 252-5405. Proposals will be accepted until 2:00 P.M., May 1, 2009.

4/9, 4/16/09
CNS-1556565#
MASSIS WEEKLY

ԸՄԲՇԱՍԱՐՏԻ ԵՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ԱՐՍԵՆ ԶՈՒԼՖԱԼԱԿԵԱՆԸ ԵՒ ԵՈՒՐԻ ՊԱՏՐԻԿԵԵԸ ԵՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԱՆՆԵՐ

Ապրիլի 5-ին Վիլնիուսում ավարտուեց յունահունական ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունը: Օլիմպիական ախոյեան Լեոն Զուլֆալակեանի ղեկավարած Հայաստանի հաւաքականը գերազանցեց պասելիքները: Նախ ախոյեանի որդին՝ Արսեն Զուլֆալակեանը (74 կգ), գետնեցի բր բոլոր մրցակիցներին, նրանց թոււմ նաեւ աշխարհի, Եվրոպայի առաջնությունների բազմակի մրցանակակիր Ալեքսեյ Շացկիխին (Ուքրաինա), գրաւեց 1-ին տեղը եւ առաջին անգամ հռչակուեց հին աշխարհամասի ախոյեան: Հայաստանի դրօշի ներքոյ 2-րդ տարին անընդմէջ Եվրոպայի ոսկէ մետալակիր դարձաւ գերծանր քաշային Եուրի Պատրիկեեւը: Թիմային պաշարում Հայաստանի հաւաքականը գրաւեց պատուաւոր 3-րդ տեղը՝ իրենից առաջ թողնելով Ռուսաստանի եւ Ուքրաինայի ըմբիշներին:



Լեոն Զուլֆալակեան

Ապրիլի 1-ին ավարտուեց Եվրոպայի ազատ ոճի ըմբշամարտի առաջնությունը: Առաջնութեան եզրափակիչ օրը Հայաստանից մրցասպարէզ ելան Արթուր Առաքելեանը (60 կգ, Երեւան), Սուրէն Մարկոսեանը (74 կգ, Գառնի) եւ Էդգար Ենոքեանը (96 կգ, Երեւան): Նրանցից միայն է. Ենոքեանին յաջողուեց գրաւել 3-րդ տեղն ու դառնալ պրոնզէ մետալակիր:



Եուրի Պատրիկեեւը աջին

Այսպիսով, Հայաստանի ազատ ըմբշամարտի հաւաքականը Եվրոպայի առաջնությունում իր հաշուեկշռում գրանցեց 1 արծաթէ եւ 2 պրոնզէ մետալ գրաւելով թիմային 5-րդ տեղը:

ԱՌԱՔԵԼ ՄԻՐՁՈՒՆԵԱՆԸ ԾԱՆՐԱՍԱՐՏԻ ԵՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱՆ

Հայաստանցի ծանրորդ, 69 կգ քաշային Առաքել Միրզոեանը, Բուխարեստում ընթացող Եվրոպայի առաջնութեան մրցաշարում ցուց տալով 336 կգ արդիւնք երկամարտում, նուաճել է չեմպիոնի կոչումը: Վենսելա Դաբայան՝ Ֆրանսիայից, 333կգ-ով 2-րդ տեղում է, իսկ 331 կգ-ով 3-րդ տեղում ռուս մարզիկ Վլադիսլավ Լուկոնինն է:



Ա. Միրզոեանը յաղթել է նաեւ պոկում վարժութիւնում 151 կգ արդիւնքով: Հրում վարժութիւնում լաւագոյնն էր Վենսելա Դաբայան՝ 186կգ, Ա. Միրզոեանը՝ 185կգ-ով՝ 2-րդ: Նշուած քաշային կարգում Հայաստանի միւս մասնակիցը՝ Գէորգ Կակոեանը, 300 կգ արդիւնքով երկամարտում՝ 140 կգ եւ 160 կգ, գրաղեցրել է վերջին՝ 8-րդ տեղը:

Ա. Միրզոեանը 1988 թուականի Սէուլի օլիմպիական խաղերի չեմպիոն Օգսէն Միրզոեանի որդին է: Անդրադառնալով որդու յաղթանակին՝ Օ. Միրզոեանն «Արմենպրես»-ին ասաց, որ Առաքելը, մեծահասակների մրցումների փորձ չունենալով, կարողացաւ կոշտ մրցակցութիւն ծաւալել Պեկինի օլիմպիական խաղերի մասնակիցների՝ ֆրանսիացի Վ. Դաբայանի, ռումին Նինել Միկուլեսկուի հետ եւ յաղթել: Ըստ նրա՝ Ա. Միրզոեանը երիտասարդների մրցումներում արդէն հաւասարը գրեթէ չունի եւ այժմ ապացուցեց, որ կարող է մրցել եւ մեծահասակների հետ. առջեւում աշխարհի առաջնութիւնն է: Նոյն քաշային Հայաստանի երկրորդ ներկայացուցիչ Գէորգ Կակոեանը (վեղի) պոկեց 140 կգ: Հրումում նա չկարողացաւ իր կամքին ենթարկել 160 կգ կշռող ծանրաձողը, 0 միաւոր ստացաւ եւ հեռացաւ ասպարէզից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԽՄԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ 2-ՐԴ ՓՈՒԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Ապրիլի 4-5-ին անցկացուեցին Հայաստանի ֆուտպոլի բարձրագոյն խմբի առաջնութեան 2-րդ փուլի հանդիպումները, որոնցում գրանցուեցին հետեւեալ արդիւնքները.

«Միկա» - «Շիրակ»՝ 3-2
 «Ուլիս» - «Փիւնիկ»՝ 0-3
 «Արարատ» - «Կիլիկիա»՝ 0-2
 «Բանանց» - «Գանձասար»՝ 1-0



Մրցաշարային աղիւսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փիւնիկ	2	2	0	0	4-0	6
2. Միկա	2	2	0	0	5-2	6
3. Կիլիկիա	2	1	0	1	2-1	3
4. Շիրակ	2	1	0	1	3-3	3
5. Բանանց	2	1	0	1	1-1	3
6. Ուլիս	2	1	0	1	1-3	3
7. Արարատ	2	0	0	2	0-3	0
8. Գանձասար	2	0	0	2	0-3	0

Հայաստանի ֆուտպոլի Գաւաթի բաւորը եզրափակիչ պատասխան հանդիպումներից յետոյ յայտնի դարձան կիսաեզրափակիչի մասնակիցները՝ «Փիւնիկ»ը, «Ուլիս»ը, «Բանանց» եւ «Միկա»ն:



Ինչպէս եւ առաջին խաղում, այս անգամ էլ փիւնիկցիները 3 անպատասխան գնդակ խփեցին «Կիլիկիա»յի դարպասը: Կիսաեզրափակիչում «Փիւնիկ»ի մրցակիցը կը լինի «Ուլիս»ը: Առաջին խաղում ուլիսցիները սեփական հարկի տակ 4-1 հաշուով յաղթել էին «Գանձասար»ին: Կապանում «Գանձասար»ին չյաջողուեց առաւելութեան հասնել 3 գնդակի տարբերութեամբ: Կապանցիները յաղթեցին շնորհիւ 33-րդ րոպէին Արսէն Աւետիսեանի խփած միակ կոլի:

Արթուրեանում «Արարատ»ը հիւրընկալեց «Բանանց»ին, որին առաջին խաղում զիջել էր 0-2 հաշուով: Այս խաղում եւս «Արարատ» պարտութիւն կրեց 0-1 արդիւնքով: Իսկ Գիւմրիում «Շիրակ»ը 1-0 արդիւնքով յաղթեց «Միկա»ին, որն առաջին խաղում յաղթել էր 3-1 հաշուով եւ այսպիսով դուրս եկաւ կիսաեզրափակիչ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԿՐԵՑ

Ապրիլի 1-ին աշխարհի ֆուտպոլի գաւաթի խաղարկութեան ընտրական փուլի ծրագրով Տալլինում անցկացուեց էսթոնիա-Հայաստան հանդիպումը: Յաղթեցին դաշտի տէրերը՝ 1:0 հաշուով: 5-րդ խմբում Հայաստանի ազգային հաւաքականը 6 թիմերի պաշարում 1 միաւորով եզրափակում է մրցաշարային աղիւսակը:



Հայաստանի հաւաքականը Սեպտեմբերի 5-ին Երեւանում կայանալիք հերթական խաղում կը հիւրընկալի Պոսնիայի թիմին: Մինչ այդ՝ Օգոստոսի 12-ին, հայ ֆուտպոլիստները ընկերական խաղում կ'ընդունեն Մոլդովայի ընտրանուն:

5-րդ խումբ Մրցաշարային աղիւսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Սպանիա	6	6	0	0	13-2	18
2. Պոսնիա	6	4	0	2	18-7	12
3. Թուրքիա	6	2	2	2	6-5	8
4. Պելզիա	6	2	1	3	10-11	7
5. Էսթոնիա	6	1	2	3	5-15	5
6. Հայաստան	6	0	1	5	3-15	1

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԳ-ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ
 ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ**
 CHARTER CABLE 280-ՐԳ ԿԱՅԱՆ
 (ՎԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆՔԱ)
 GLOBCAST SATELLITE
 ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՐԵՎԱՆԵԱՆ ԺԱՄԱՆ 10:00-11:00

ՔԱՉ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
 Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30
 Կլէնտէյլի 280-րդ կայանից

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
 «Մասիս» Շաբաթաթերթին
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863